

ԲԱԱԳՐԵՐ
ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԵՐ
TEXTS ET ETUDES

ՀԱՅՈՑ ՆԱԽԱՀԱՅԿԵԱՆ ՕՐԱՑՈՅՑԻ ՍԿԻԶԲԸ

Տակաւին միջնադարեան հայկական օրացոյցների քննութեան միջոցով՝ Նախահայկեան օրացոյցը վերականգնելիս խնդիր էր գըրուել գտնել միայն այդ օրացոյցի ներքին կառուցուածքը։ Գտնուած էր, որ այդ օրացոյցը էական փոփոխութեան է ենթարկուել ն.թ. 2341ին Հայկ նահապետի տոմարադիր գործունչութեամբ, այսինքն՝ իր նախնական կառուցուածքով դադարել է գոյութիւն ունենալ հէնց նշեալ ժամանակից։ Այդուհանդերձ, Նախահայկեան օրացոյցին բնորոշ բազմաթիւ օրացուցային իրողութիւններ յարատեւել են եւ ապրել Հայկեան (գուցէ եւ այլ) նախաքրիստոնէական օրացոյց (ներ)ի մէջ, դրանից յետոյ էլ՝ հայկական միջնադարեան օրացոյցների մէջ։

Մասնաւորապէս՝ երկար ժամանակ յարատեւել է տարեկան գըրիսաւոր տօնը՝ Նաւասարդը ամառնամուտից մէկ շաբաթ առաջ տօնելու կարգը, Նաւասարդին նախորդող (իգական սկիզբի հետ կապուած) տարատեսակ արգելքների շրջանի առկայութիւնը եւ այլն։ Հնդ որում, Նախահայկեան օրացոյցից սկիզբ առնող այս (եւ որոշ այլ) իրողութիւններ, դիմակայինով դարերի փորձութիւններին, յարատեւել ու հասել են մինչեւ Հայաստանում քրիստոնէութեան սկրզբի դարելը եւ գեռ աւելի ուշ։ Դրա արձագանգները մեզ հասել են նոյնիսկ թ.։ ժ.։ դարերից։

Միեւնոյն ժամանակ, բաց էր մնացել այն հարցը, թէ Ե՞րբ է սկիզբ առել այս օրացոյցը, ի՞նչ պատմական հանգամանքների հետ է առնչուած դրա սկիզբը, ո՞վ է հիմնադիրը եւ այլն։ Իսկ յայտնի է, որ կամայական օրացոյցի մասին պատկերացումը փոքր ի շատէ ամբողջական լինելու համար հարկ է օրացոյցի կառուցուածքի ընդհանուր

1 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Հայոց հնագոյն օրացուցային պատկերացումները ըստ Ագարանցեղոսի «Հայոց Պատմութեան», ի էջմիածին, 1998, Ձ., 45-53, նաև՝ ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Հայկական հնագոյն օրացուցային պատկերացումները եւ Վասիլ Դիգենիս Ակրիտասի մասին բիւզանդական դիցավէպը, ի Բազմավէպ, 2004, 5-16։

եւ մանրամասն պատկերից զատ ունենալ նաեւ նշեալ հարցերի պատասխանը՝ եթէ ոչ ճշգրիտ քանակական, ապա գոնէ՝ որակական:

Ժամանակին այս օրացոյցի սկզբի հարցը չի քննարկուել միմիայն այն պատճառով, որ չեն եղել բաւարար ելակէտային տուեալներ, եւ չի նկատուել որեւէ միջոց, որեւէ եղանակ, որով հնարաւոր կը լինէր այդպիսի խնդիր լուծել:

Ներկայումս, Հայոց հնագոյն օրացուցային մշակոյթի հետ կապուած տուեալների աւելացումով եւ որոշ նոր իրողութիւնների բացայտումով, էապէս աւելացել է մեր գիտելիքը նախահայկեան օրացոյցի մասին: Ուստի, բնական է մտածել, որ, թերեւս, արդէն ա՛յա՝ զգալիօրէն աւելացած գիտելիքի հիման վրայ, հնարաւոր լինի գոնէ որոշ ճշուեթեամբ լուծել նախահայկեան օրացոյցի սկիզբը գտնելու խնդիրը:

Նախքան բուն խնդրին անցնելը համառօտակի վերյիշենք, թէ ինչպիսին է եղել նախահայկեան օրացոյցը, եւ ինչպէս է գտնուել այն:

Պայմանականօրէն նախահայկեան է կոչուած այն օրացոյցը, որ կիրառուել է Հայաստանում Հայկեան օրացոյցից առաջ: Սրա ներքին կառուցուածքը սկզբունքային գծերով հնարաւոր է եղել վերականգնել՝ Հայկական միջնադարեան օրացոյցների եւ դրանց յարակից տարաբնոյթ տեղեկոյթի հետազօտութեամբ: Նախահայկեան օրացոյցի տարին պարունակել է միայն 10 ամիս՝ 300 օրով: Այս 300օրեայ տարուց յետոյ եղել է 65-70օրեայ արտատարեկան ժամանակ, որ համապատասխանել է գլխաւոր պաշտուող էակի (Հայկի, Հայր աստուծոյ) աստղի չերեւալու շրջանին: Բուն տարին էլ համապատասխանել է այն ժամանակին, որի ընթացքում հնարաւոր է եղել գիշերային երկնքում դիտել Հայկի աստղը: Տարուայ առաջին 3 ամիսները ձօնուած են եղել 3 արական արեգակնային կերպարների՝ Հայր աստուծոյ երեք որդիներին, յաջորդ 7 ամիսներն էլ ձօնուած են եղել 7 իդական կերպարների՝ Հայր աստուծոյ 7 դուստրերին: Արտատարեկան ժամանակը եղել է հիմնականում իգական սկիզբի հետ կապուած արգելքների շրջան: Տարուայ 300 օրերից 5ը միաժամանակ «պատկանել» են թէ՛ բուն տարուն, եւ թէ՛ արտատարեկան օրերին, որով տարին համարուել է 300օրեայ, եւ արտատարեկան ժամանակն էլ եղել է 70օրեայ: Տարին սկսուել է Հայկի աստղի արեգակնային ամբարձումով եւ աւարտուել է այդ նոյն աստղի արեգակնային անկումով: Գլխաւոր տօնը՝ նաւասարդը, կապուած նշեալ աստղի արեգակնային ամբարձման հետ, տօնուել է ամառային աստղի արեգակնային ամբարձից 8 օր առաջ (մեր արդի Գրիգորեան օրացոյցով՝ Յունի-

սի 14ին): Այս օրացոյցի կիրառութիւնը պաշտօնապէս դադարել է ն.թ. 2341ին, երբ ի հետեւանք Հայկ նահապետի տոմարադիր գործունէութեան, այն փոխարինուել է աւելի պարզ Հայկեան օրացոյցով:

Հայկեան օրացոյցն էլ, իր հերթին, եղել է պարզ արեգակնային օրացոյց ՅԵԶօրեայ հաստատուն տեւողութեամբ տարիներով։ Մրատարեմուտը դանդաղ սահել է տարուայ եղանակներով եւ մէկ լրիւ պտոյտ է կատարել 1506 արեւադարձային տարում։ Հակառակ շարժական տարեմուտ ունենալուն, Հայկեան օրացոյցում պահպանուել է տարեկան գլխաւոր տօնը՝ Նաւասարդը Հայկի աստղի արեգակնային ամբարձման հետ կապելու, որով եւ միշտ ամառնամուտից 8 օր առաջ տօնելու կարգը։ Հայկեան օրացոյցը առանց էական փոփոխութիւնների Հայաստանում կիրառուել է մինչեւ քրիստոնէութեան պաշտօնական ընդունումը։

Թէպէտ Նախահայկեան օրացոյցը մեզ չի աւանդուել ոչ ուղղակի կիրառութեամբ, ոչ եւս մատենագիր վկայութիւններով, այդուհանդերձ դրա գոյութեան բազմաթիւ արձագանգներ մեզ են հասել թէ՛ Հայոց պատմութեան վաւերագրերում³, թէ՛ հայ բանահիւսական հարուստ ժառանգութեան մէջ (հրաշապատում հէքեաթներ, Սասնայ ծուեր դիցավէպ եւն)⁴, թէ՛ հարեւան ժողովուրդների մշակոյթում⁵, եւ թէ՛ մօտ ու հեռու որոշ հարեւան ազգերի օրացոյցներում⁶։

Թէպէտ նշեալ տարբեր բնոյթի աղբիւրներից քաղուած վկայութիւնները լիովին բաւարար են Նախահայկեան օրացոյցի գոյութիւնը հաստատուած համարելու համար, այդուհանդերձ, կայ նաեւ

- 2 ԲՐՈՒՏԵՍԱՆ, Գ., Հայոց տոմարի որոշ հարցերի մասին. Նախահայկեան օրացոյցի կառուցուածքը, ի Էջմիածին, 1996, ԺԲ., 135-164: ՆՈՅՆ, Օրացոյց Հայոց, Մայր Արքու Ս. Էջմիածին 1997, 385-430:
- 3 ԲՐՈՒՏԵՍԱՆ, Գ., Հայոց հնագոյն օրացուցային պատկերացումները բայ Ագարանգեղոսի «Հայոց Պատմութեան», ի Էջմիածին, 1998, Զ., 45-53:
- 4 ԲՐՈՒՏԵՍԱՆ, Գ., Որոշ օրացուցային իրողութիւններ հայկական հրաշապատում հէքեաթներում. Ա., Բ., Գ., ի Էջմիածին, 2008, Բ., 49-70. 2009, ԺԲ., 62-83. 2010, Զ., 22-44:
- 5 ԲՐՈՒՏԵՍԱՆ, Գ., Հայկական հնագոյն օրացուցային պատկերացումները եւ վասիլ Դիգենիս Ակրիտասի մասին բիւզանդական դիցավէպը, ի Բազմավէպ, 2004, 5-16:
- 6 ԲՐՈՒՏԵՍԱՆ, Գ. - ԽԱՉԱՏՐԵՍԱՆ, Ա. Որոշ ժամանակային առնչութիւններ Աստուածաշնչում, ի Բազմավէպ, 2008, 83-100:

մի եզակի նիւթական առարկայական վկայութիւն, որ անմիջականօրէն հաստատում է այս օրացոյցի գոյութիւնը: Խօսքը վերաբերում է Շիրակի Քեթի գիւղի բրոնզիդարեան դամբարաններից գտնուած մի քրեղանի, որի զարդապատկերները ունեն օրացուցային բովանդակութիւն: Ահա այս քրեղանի զարդապատկերների մանրամասն վերլուծութիւնը հնարաւոր է դարձնում վերականգնել այն ստեղծողների կիրառած օրացոյցը: Եւ այս վերլուծութեամբ ստացուած օրացոյցն էլ սկզբունքօրէն համընկնում է մեր վերականգնած Նախահայկեան օրացոյցի հետ⁷: Հստ հնագիտական թուագրումների քրեղանս վերաբերում է ն.թ. 32րդ դարին⁸, ուստի ունենում ենք, որ գոնէ այդ ժամանակ Հայաստանում կիրառուել է Նախահայկեան օրացոյցը: Փաստօրէն, ի դէմս այս նշեալ քրեղանի ունենում ենք Նախահայկեան օրացոյցի կառուցուածքը փաստող եւ գոյութիւնը հաստատող տեղեկոյթի նիւթական կրիչ, որ հարկ է համարել եզակի յաջողութիւն:

Արդ, նայենք, թէ ի՞նչ տուեալներ ունենք, որոնց միջոցով հնարաւոր կարող է լինել գտնել Նախահայկեան օրացոյցի սկիզբը:

Ա.- ՆԱԽԱՍՏԱՐԴԻ ԱՄԻՍՆ ՈՒ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ ՏՕՆԸ

Այլ առիթներով քննելով Նաւասարդեան տօնի ծէսերի եւ բովանդակութեան խնդիրը, յատուկ դիտարկուել է այս տօնի աղերսը Հացի պաշտամունքի հետ⁹: Այժմ նայենք, թէ ի՞նչպէս են իրար համապատասխանում Նաւասարդի ամսի դիրքը եւ Հացի մշակութեան ժամանակները:

Մեր խնդրի համար այստեղ էական է այն, որ Հայոց Նաւասարդեան տօնի հետ պարտադիր կապուած է եղել Հացի պաշտամունքը խորհրդանշող ծէսերի մի հարուստ փունջ: Սրանցից յիշատակենք միայն մի քանիսը:

ա. Եղել է Ամանորին յատուկ ծիսական կլրակ հաց թխելու, այն ընտանիքի բոլոր անդամներին բաժանելու եւ միասին ճաշակե-

⁷ ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Հայկական հնագոյն օրացուցային պատկերացումները ըստ Ա.Թ. 28-27րդ դարի քրեղամի զարդապատկերի վերլուծութեան, ի Բազմավէպ, 2007, 149-163:

⁸ “Dans les montagnes d’Arménie, 500 000 ans d’histoire avant notre ère” ցուցահանդէսի գիտական կատալոգ, Rouen 2007, 134, notice 21.

⁹ ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Օրացոյց Հայոց, Մայր Ա. Էջմիածին 1997, 261-356:

լու ծէս. ընդ որում, այդ հացը կոչուել է «Տարի»¹⁰: Այդ ծիսական հացով (դրա մէջ դրուած յատուկ նշանով) կատարուել են նաեւ ապագայի պարզ գուշակութիւններ:

բ. Նաւասարդեան տօնին եղել է աղբիւրներին ցորեն, գարի եւ դրանցից պատրաստուած տարբեր տեսակի հացեր նուիրաբերելու ծէս: Ընդ որում, այս նուիրաբերումը ուղեկցուել է յատուկ կանոնականացուած խօսքերով (ըստ էութեան՝ հնագոյն աղօթքներով):

գ. Նաւասարդեան տօնի պարտադիր ծիսական կերակուրը հարիսան է, որ պատրաստում է անպայման ցորենով ու եղջերաւոր անասունի մսով¹¹, իսկ Հայաստանի որոշ շրջաններում էլ, տուրք տալով նոր շրջանում Հայոց մէջ տարածուած՝ Յունուարի 1ին՝ Մննդեան պահքի օրերին Ամանոր տօնելու հանդամանքին, հարիսան վերածուել է դրա անմիս տարբերակների՝ պահոց քէշկէկ, կաղանդի կորկոտ, անուշապուր եւն: Մրանց բոլորի մէջ պահպանուած է հիմնական բաղադրիչը՝ ցորենը: Ուշագրաւ է, որ ներկայումս էլ Հայոց Ամանորի սեղանի պարտադիր ուտեսատների ցանկում առաջնային տեղ ունի նաեւ տոլման, որ, ըստ էութեան, դարձեալ ցորենի¹² ու մսի համադրութիւնն է որոշ այլ մշակաբոյսերի եւ յատ-

10 Կարեւոր է, որ այս «Տարի» կոչուած ծիսական հացերը զարդարուել են սերմերով ու պտուղներով եւ բացի այդ, դրանց վրայ արուել են երկնային լուսատութերի տեսքով զարդեր եւս (Արեւ, Լուսին, մոլորակներ, աստղեր եւ կենդանակերպերի նշանակներ): Տե՛ս ԲԴՈՅՑԵԱՆ, Վ., Երկրագործական մշակոյթը Հայաստանում, 438 – 441: Սա մի կողմից վկայութիւն է Հայոց Ամանորը «նոր պտղոց» տօն լինելու, միս կողմից ել վկայութիւն է այդ տօնը երկնային լուսատութերի հետ կապուած լինելու:

11 Թէպէտ ներկայումս տարածուած է համի մսով հարիսա պատրաստելը, սակայն առկայ տուեալները վկայում են, որ նախնարար հարիսան պատրաստուել է անպայման սրածայր եղջիւրներով կենդանու մսով (ուլ, կամ եղջերու). ԲԲՈՒՏԾԵԱՆ, Գ., Օրացոյց Հայոց, 353:

12 Անշուշտ, բոլորս գիտենք, որ ներկայումս տոլման պատրաստում է հիմնականում բրինձով: Սակայն յայտնի է նաեւ, որ բրնձի մշակութիւնը Հայաստանում բաւական նոր է եւ գալիս է արեւելքից, եւ, ըստ այսմ, այս կերակուրի մէջ եւս նախապէտ պիտի բրնձի փոխարէն լիներ ցորեն, կամ ցորենի ծաւար, որ ցորենից աւելի դիւրաեփ է եւ լիովին կարող է տոլմայի մէջ փոխարինել ցորենից աւելի արագ եփուող բրնձին: Օրինակ, Առ. Պատրիկի վկայութեամբ Սերաստիայի շրջանում «Բրինձը երկրորդական գործածութիւն ուներ...» տե՛ս ԱՌԱՔԵԼ ՊԱՏՐԻԿ, Պատմագիրք յուշամատեան Սերաստիոյ եւ գաւառի հայութեամ, Բ., Տպ. Տօգգիր, Նիւ Ճըրգի 1983, 88: Ասուածի օգտին է նաեւ այն, որ մինչ այժմ էլ Հայոց մէջ պահպանուած է ցորենի ծաւարով (բլղուրով)

կապէս՝ խաղողի (դրա տերեւի) հետ։ Նոյնն է նաեւ Կիլիկիայի Հայոց աւանդական Ամանորի կերակուրի՝ միջուկով կոլուակի (թուրքերէնով՝ իչլի քիւֆթա) պարագան։ սա եւս բացառապէս եփած ցորենի ձաւարով ու մսով պատրաստուած կերակուր է եւ մինչեւ այժմ էլ յատուկ է Ամանորի սեղանին։ Այս ճաշատեսակը, որ Կիլիկիայի տարբեր հատուածներում յայտնի է տարբեր անուններով։ Գլուր (Մուսա լեռ), Միջուկով քեռվֆթա (Աղանա) եւն, իր բոլոր տարբերակներով էլ ունի նոյն կազմութիւնը։ Եփած եւ ապա տապակած աղացած մսից միջուկը (որոշ տարբերակներում՝ ընկոյզով) ներդրուած է մսից ու ցորենի ձաւարից պատրաստուած արտաքին պատեանի մէջ, եւ ամբողջին տրուած է կլոր, կիսակլոր, կամ ձուածեւ տեսք։ Միով բանիւ՝ սա եւս մսի ու ցորենի համադրութիւն է։ Իսկ արտաքին կլոր ձեւն էլ, ամենայն հաւանականութեամբ, հարկ է կապել նորահաս պտուղի գաղափարի հետ, իբրեւ պտուղի նմանակում¹³։

Դ. Այս նոյն՝ Նաւասարդեան հնագոյն ծէսերին պիտի կցել եւ մինչեւ օրս Հայոց մէջ կենդանի՝ Զատիկին յատուկ ծիսական Զատկուայ հաց թիւնելու աւանդոյթը, նկատի առնելով, որ Զատիկն էլ իր ժողովրդական ծէսերով ու խորհուրդներով մի էական բեկորն է Նաւասարդեան հնագոյն տօնաշարքի։ Ընդ որում, այս զատկական ծիսական հացերի մէջ եզակի թուով պատրաստուել են նաեւ յատուկ մարդակերպ հացեր¹⁴, որ ուղղակի վերապրուկն է հացի հնագոյն

տոլմա պատրաստելու աւանդոյթը (տե՛ս, օրինակ, ԹԵՄՈՒՐՃԵԱՆ, Վ. Ս., Գամիրքի հայերը, Հայ ազգագրուրիւն եւ բանահիւսութիւն, Ս., ՀՍՍՀ ԳԱ հրտ., Երեւան 1970, 97), ՄՈՎՍԻՍԵԱՆ, Ս., (ԲԵՆՍԵ), Հարք, Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, Գ., ՀՍՍՀ ԳԱ հրտ., Երեւան 1972, 36։ Ի դեպ, այժմ որոշ գաւառներում բբնձի փոխարէն այլ ճաւարերով տոլմա պատրաստելու աւանդոյթը պահպանուել է պասուց տոլմայի ձեւով։

- 13 Ի դեպ, սրա ձուածեւ տարբերակների արտաքին տեսքն էլ հնարաւոր է դիտել իբրև հենց ձուի նմանակում (այս պարագայում կոլուակի միջուկն ու արտաքին պատեանը կը գուգադրուեն ձուի դեղնուցին ու սպիտակուցին), եւ իր այս յատկանիշով սոյն կերակրատեսակը լիովին կը գուգադրուի Ամանորի միւս ծիսական ուտեստին՝ Զատկուայ ներկուած հաւկիրին, վերջինիս բոլոր խորհուրդներով ու ծիսական նշանակութեամբ։
- 14 Ես ինքս իմ մանկութեան տարիներին բազմիցս ականատես եմ եղել, թէ ինչ պէս մօրական տասու (Էօժենի Քէօշկէրեան (1903-1981), թնիկ՝ Կիլիկիայի Աղանա բաղադրից), զատկական յատուկ հացերը պատրաստելու ամենանկերդանա բաղադրից, զում երկու փոքր մարդակերպ հաց էր պատրաստում մէկը տղամարդու, միւսը՝ կնոջ տեսքով եւ անպայման տալիս մեզ՝ տան երեխաներիս։

պաշտամունքին առնչուող մարդակերպ աստուածների պաշտամունքի: Այս նոյնի տարբերակ են պատմական Հայաստանի որոշ շրջաններում Ամանորին թխուող ծիսական մարդակերպ հացերը, որ յայտնի են «վասիլեր» անունով¹⁵:

Այս կապակցութեամբ տեղին է յիշել, որ Հայաստանի պայմաններում աշնանացան ցորենի հասունացումը ցանքսից մինչ բերքահաւաք տեւել է շուրջ 270 օր: Եթէ սրան էլ յաւելենք հունձքի, խրձեր կապելու եւ դրանք սայլով կալատեղ կրելու, կալսելու, աղալու եւ ի վերջոյ՝ հացը թոնրի մէջ թխելու համար անհրաժեշտ առնուազն 5 օրերը, կը ստանանք 275 օր, որ գեռեւս միջնադարում մարդու սաղմի հասունացման համար անհրաժեշտ ժամանակի կանոնականացուած տեւողութիւնն էր: Այսինքն, ցորենը յատկապէս՝ աշնանացան ցորենը ինքը լիովին կարող էր ընկալուել իբրեւ մարդ, կամ մարդուն համարժէք իրողութիւն¹⁶: Եւ մարդակերպ ծիսական հացի պատրաստումը Ամանորի վերապրուկ հանդիսացող տօնին (Զատիկին) հաստատում է, որ հնում այսպիսի նոյնացում, այսպիսի ընկալում, իրօք, եղել է:

Ա. Ինչպէս տարբեր տեղեր ցոյց է տրուած¹⁷, Հայոց Նաւասարդեան (Ամանորի) հնագոյն տօնի մի կարեւոր բեկոր է Հայաստանում ցարդ կենդանի Վարդափառի տօնը իր ուշագրաւ ժողովրդական ծէսերով ու սովորութիւններով: Ահա, Վարդափառի (ուրեմն, նախապէս՝ Ամանորի) ժողովրդական սովորութիւնների մէջ յատուկ տեղ է ունեցել հացահատիկի հասկեր եկեղեցի բերել-ընծայելը: Հետեւաբար, այստեղ ունենք հացի բերքի երախայրիքը տաճարին ընծայելու հնագոյն կարգի վերապրուկը: Բնականաբար, այսպիսի ընծայումը պիտի լինի բերքի օրհնութեան ակնկալիքով: Ուրեմն, նախապէս պիտի եղած լինի հացի բերքի երախայրիքի ընծայում եւ օրհնութիւն:

Այս շարքը կարելի է դեռ երկար շարունակել, սակայն այսքանն էլ բաւարար է, համոզուելու համար, որ իրօք, Հայոց հնագոյն Նաւասարդի (Ամանորի) տօնը սերտօրէն կապուած է եղել հացի՝ ցորենի

15 Տե՛ս ԲԴՈՅԵԱՆ, Վ., Երկրագործական մշակոյթը Հայաստանում, 441-442:

16 Տեղին է յիշել, որ նոր Կտակարանում եւս ունեմք մարդու կեանքի գուգաղրումը ցորենի հատիկին: Այստեղ Յիսուս, ակնարկելով իր վերահաս մահն ու յարութիւնը, համեմատում է մարդու Որդուն ցորենի հատիկի հետ. «Եթէ ոչ հատն ցորենոյ ամիսայ յերկիր մնուանիցի, իմբն միայն կայ. ապա երկ մեռանիցի, բազում արդիւն առնել» (Յհ ԺԲ, 24):

17 Տե՛ս, օրինակ, ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Օրացոյց Հայոց, 301-350:

(Եւ գարու) պաշտամունքի եւ յատկապէս՝ աշնանացանի բերքահաւաքի հետ:

Նաւասարդը-Ամանորը հին Հայոց մօտ հացի պաշտամունքի հետ կապուած լինելը համարենք մեր խնդրի համար անհրաժեշտ առաջին մեկնարկային տուեալը: Արդ անցնենք յաջորդ մեկնարկային տուեալները գտնելուն:

Բ.-ՀԱՅԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՒ ԱՍՏՂԱԼԻՑ ԵՐԿԻՆՔԸ

Տակաւին քսաներորդ դարի սկզբին տարբեր հեղինակների կողմից ցոյց է տրուած եղել, որ աստղալից երկնքի՝ ներկայումս ընդունուած բաժանումն ըստ համաստեղութիւնների աւարտուել եւ վերջնական տեսքի է եկել չուրջ ն.թ. 2800 թուականին Հայկական Լեռնաշխարհի տարածքում: Այս արդիւնքը այդ ժամանակ ստացուել է զուտ աստղագիտական եւ աշխարհագրական տուեալների հիման վրայ¹⁸ եւ լաւ հիմնաւորուած է, եւ կարեւոր է, որ մինչեւ օրս (100 տարուց աւելի) այս արդիւնքը որեւէ փաստարկով հերքուած չէ: Ներկայումս այս նոյն արդիւնքին ի հիմնաւորումն կարելի է վկայակոչել պատմական Հայաստանի հետազոտուած սահմանափակ տարածքի վրայ յայտնաբերուած աստղագիտական (եւ օրացուցային) բնոյթի բազմաթիւ ժայռապատկերները, հնադարեան տարբեր գտածոնները եւ հնարաւոր աստղագիտական-օրացուցային բովանդակութեամբ կառույցները: Ներկայիս տուեալների հիման վրայ կարելի է միայն փոքր-ինչ «շտկել» այստեղ ստացուած ժամանակը, բայց այլ փոփոխութիւնների համար հիմքեր չկան:

Արդ, ունենք, որ գոնէ ն.թ. լթ. դարից մինչեւ ն.թ. իդ. դարը Հայաստանում կիրառուել է Նախահայկեան օրացոյցը: Եւ սրա հետ մէկտեղ՝ ն.թ. 2800ի մօտ աւարտուել, վերջնական տեսքի է հասել աստղալից երկնքի բաժանումն ըստ համաստեղութիւնների եւ դարձեալ՝ պատմական Հայաստանի տարածքում: Այսինքն, այս գործընթացն էլ շարունակուել է մինչեւ ն.թ. իլ. դարը:

Մեր խնդրի համար կարեւոր է այն, որ այս երկու իրողութիւնները Նախահայկեան օրացոյցի կիրառութիւնը եւ աստղալից երկնքի տրոհումն ըստ համաստեղութիւնների, դրա մշակութակալութեամբ:

18 OLCOTT, W.T., *Star lore: myths, legends and facts*, Dover Publ., Mineola, New York 2004, (Originally published New York, G.P. Putnam's Sons 1911), 6-8. Այս մասին տե՛ս նաև ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., *Օրացոյց Հայոց*, 174-175:

նացումը) եղել են միեւնոյն տարածքում եւ (գոնէ մասամբ) համաժամանակեայ: Ուրեմն, բնական է ակնկալել այդ իրողութիւնների միջեւ կապեր եւ դրանց փոխադարձ ազդեցութիւն:

Քանի որ ե՛ւ նախահայկեան օրացոյցը, ե՛ւ աստղալից երկնքի համաստեղութիւնները երկուսն էլ մշակութային իրողութիւններ են, բնական է, որ երկուսն էլ արդիւնք լինեն իրենց «ծննդեան» ժամանակ իրենց ընդհանուր «ծննդավայրում» գոյութիւն ունեցած մէկ միասնական մշակութային համակարգի¹⁹:

Արդ, եթէ աստղալից երկնքի բաժանումը իրագործուել եւ աւարտին է հասցուել Հայաստանում, ապա, բնական է ակնկալել, որ Հայաստանում էլ գտնուեն այդ նոյն աստղաբաժանման հետ կապուած մշակութային տարբեր իրողութիւններ: Այսինքն, այն նախական մշակութային համակարգը, որ ծնունդ է տուել աստղալից երկնքի բաժանմանը, կարող էր յարատեւել եւ մեզ հասնել նաեւ Հայաստանի ու Հայութեան հետ կապուած այլ մշակութային իրողութիւնների միջոցով:

Հայոց եւ որոշ հարեւան ազգերի մշակոյթներով մեզ հասած աստղալից երկնքի տրոհման մէջ ունենք հացի մշակութեանը սերտօրէն առնչուող մի քանի համաստեղութիւններ: Այսպէս. այսօր Մեծ Արք եւ Փոքր Արք կոչուող համաստեղութիւնները հայկական աղբիւրներում կոչուած են համապատասխանաբար Սայլ եւ Միւս Սայլ: Ի դէպ, այս համաստեղութիւնների համանման հին անուններ պահպանուել են նաեւ որոշ այլ հնդեւրոպական ազգերի մշակոյթում: Այս երկու իրար մօտ սայլերն էլ սերտօրէն կապուած են ցորենի մշակութեան հետ: Հացի արարման գործընթացում սայլը մասնակցել է հէնց երկու անդամ՝ առաջին անդամ՝ խրձերը արտից կալատեղ տանելիս եւ երկրորդ անդամ՝ կալսելիս: Ամենահին ժամանակներում կալը կատարուել է հէնց կալատեղի կենտրոնի շուրջ

19 Անշուշտ, չի կարելի բացառել, որ այդ նոյն ժամանակ այդ նոյն տարածաշրջանում գոյութիւն ունեցած լինեն մեկից աւելի մշակութային համակարգեր, եւ մեր խնդրոյ առարկայ իրողութիւնները ծագած լինեն տարբեր նախնական մշակութային համակարգերից: Եթէ դա այդպէս լինէր, ապա օրացոյցն ու համաստեղութիւնները պիտի ինչ-ինչ կէտերում լինեին իրարից էապէս տարբեր (հնարաւոր է, որոշ կէտերում նոյնիսկ՝ իրար հակառակ): Սառուե կը տեսնենք, որ գոնէ մեր խնդրոյ առարկայ իրողութիւնների սահմաններում նման տարբերութիւններ, առաւել եւս՝ հակասութիւններ չկան: Այսինքն, իրօք, մենք գործ ունենք մէկ միասնական նախնական մշակութային համակարգի հետ:

պտտուող փոքր սայլով, իսկ աւելի ուշ սկսել է կիրառուել կամնը, որ դարձեալ կոչուել է սայլ-կամնասայլ²⁰: Այսինքն, երկնքում ունենք երկու սայլ եւ երկու սայլ էլ ունենք հացի մշակութեան աւանդական գործընթացում:

Աւելացնենք նաև, որ մինչեւ քսաներորդ դարի սկիզբները պահպանուած եւ գրի առնուած հայկական աշխատանքային երգերի շարքում կան «Սայլի երգ» եւ «Լալի երգ», ընդ որում, այս երկու երգերը յաճախ կից են իրար. կան տարբերակներ, ուր այս երկուսը միաւորուած են եւ հանդէս են գալիս իբրեւ մէկ ամբողջութեան մասեր²¹:

Այս երկնային սայլերի մօտ այսօր էլ երկնքում իր տեղն ունի եզրող համաստեղութիւնը, որ ներկայումս առաւել յայտնի է (հաւանաբար ուսւերէն Յոլոնաչից թարգմանուած) եզնարած-Bootes անունով: Մա վերը յիշատակուած երկնային սայլի եզները քշողն է: Ի դէպ, հէնց սրա տեղում 1749ին Միխիթար Սեբաստացու տպած երկնային քարտէսի վրայ ներկայ է Յորենքաղ մշակը՝ (Արջապան անունով) մանդաղն ու գաւազանը ձեռքին, որ, թէպէտ կոչուած է «Արջապան», այդուհանդերձ ձեռքին բռնած մանդաղով միանշանակ ներկայանում է իբրեւ ցորենքաղ մշակ (Նկար 1)²²: Այս՝ Յորենքաղ

20 Ի դէպ, հայ. «կամն» բառն ըստ Ս.Յառեանի կարող է ծագած լինել հեխ ցա - «կով, եղ» եւ մին - «կոխոտեկ» բառերից. Ա.ՃԱՐՈՒԾՈՒՆ, Հ., Հայերէն արմատական բառարան, Բ., Երեւանի Համալսարանի հրտ., Երեւան 1971 - 1979, 502: Թէպէտ Ս.Յառեանը, հետեւելով Ս. ՄԵԿԻՆ, սա չի դրել իբրեւ բառիս ընդունուած ստուգարանութիւն, այլ դրել է առաջարկուած տարբեր ստուգարանութիւնների մէջ, այդուհանդերձ երեւ թիշտ սեպենք այս բացառութիւնը, ապա կարելի է սրանից հետեւեցնել, որ կալսելու գործողութիւնը նախապէս պիտի արուած լինի հենց միայն եզների ունենի տակ որանը տրութելով, առանց որեւէ յատուկ գործիքի, իսկ սայլն ու կամնը պիտի կիրառուած լինեն աւելի ուշ:

21 Տե՛ս, օրինակ, ԿՈՄԻՏԱՆ.Ս. Երկերի ժողովածու, Բ., ԱԹԱՅԵՍԱՆ, Ռ., (Խմբ.), «Հայաստան», Երեւան 1969, 111: Ի դէպ, հացարարման այս երկու առանձին փուլերին վերաբերող աշխատանքային երգերի միաւորումը, մէկտեղումը հասկանալի կը դառնայ, երեւ յիշենք, որ այդ փուլերը երկուսն էլ կատարուել են միեւնոյն (կամ նոյնանուն) գործիքով՝ սայլով:

22 ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏՈՅԻ, Բառգիրք Հայկագեան յեզուի, Ա., Վանեսիկ 1749, Ենթիթիք-քարտէս 500-501 էջերի միջեւ: Այս համաստեղութեանը տրուած «Արջապան» անունը կարելի է բխեցնել համաստեղութեան «Սայլ» անունը «Մեծ արջ»ով փոխարինուած լինելուց: Այսինքն, այս Արջապանը դրուած է Սայլապանի փոխարէն: Իսկ սա արդէն լիովին համապատասխանում է նրա

Ֆշակ անունը, իբրեւ երկնային համաստեղութեան անուն վկայուած է մեզ միջնադարից²³: Հետաքրքիր է, որ եւրոպական բազմաթիւ աստեղային քարտէսների վրայ եւս Եզող համաստեղութիւնը պատկերուած է մի ձեռքին գաւազան կամ նիզակ, միւսում՝ մանդալ ըռնած²⁴ տղամարդու տեսքով (Նկար 2): Այսինքն, այս աստեղատան՝ ցորենի հունձքի հետ կապուած լինելու աւանդոյթը պահպանուել է ոչ միայն Հայոց մէջ, այլ նաեւ եւրոպական որոշ ազգերի աւանդոյթում:



Նկար 1.

Ա.քապան (Bootes)
համաստեղութիւնը ըստ Մխիթար
Սեբաստացու 1749 քառարանի
նկրիդիք Քարտեսի

սա նշանակում է ջրաղացի ջրատար խողովակը²⁵, եւ ապա սա կարող է նշանակել ակօս²⁶: Այս երկու իմաստներով էլ Վաքն անունը որո-

կան նաեւ միջնադարեան ձեռագրերով մեզ աւանդուած մի շարք հայկական աստղանուններ, որ տակաւին յստակ նոյնացում չունեն, սակայն հնարաւոր է՝ նշանակեն հացարարման հետ աղերսներ ունեցող առարկաներ, կամ գործող անձեր: Նշենք սրանցից մեր իննդրի համար կարեւորները:

- Խաչաստղը, որ համարում է Սայլի չորս կողմերի քառակուսի ձեւացնող աստղերը միասին:

- Վաքն աստղը կամ համաստեղութիւնը: Այս բառը հայերէնում ունի երկու նշանակութիւն. նախ

պատկերագրութեանը՝ մանգաղով ու մահակով, որ կը նշանակի այն ցորենիքաղ մշակը, որ հունձքը աւարտելուց յետոյ իր հնձածը սայլով տեղափոխում է կալատեղ:

23 Ա.ԼԻՇԱՆ, Պ., Հիմ հաւատք կամ հերամուսակամ կրօնք Հայոց, Վեճետիկ 1895, 112 – 133: Տե՛ս Բաեւ ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Օրացոյց Հայոց, 489 – 491:

24 ARATI SOLENSIS, Phaenomena et prognostica, Köln, 1570.


25 ՄԱԼԻՍԱՍԵԱՆՑ, Ա., Հայերէն քացարակամ քառարան, Դ., ՀՍՍՀ պետ. իրատ., Երեւան 1944 – 1945, 317:

26 ՍՈՒԲԻՍ.Ս.ՍԵԱՆ, Ա. Մ., Հայոց լեզուի հոմանիշների քացարակամ քառարան, ԵՊՀ իրատ., Երեւան 2009, 16, 1053: Այստեղ քանիս սոյն իմաստի համար նշուած է, որ այդ իմաստով քառը կիրառուում է բժշկութեան մէջ, սակայն դրանով չի կարելի քացանել այդ իմաստի աղերսը երկրագործական իմաստի հետ:

շակիօրէն կապւում է ցորենի մշակութեան հետ: Ջրաղացը հացարարման պարտադիր փուլերից է Ընախավերջինը՝ հացը թիսելուց առաջ): Իսկ ակօսն էլ, հասկանալի է, անմիջականօրէն կապուած է արտը վարելու հետ: Այսինքն, եթէ սա հասկանանք իբրեւ ակօս, ապա այս աստղը կամ աստղերը պիտի լինեն անմիջապէս Գութանի աստղի մօտ (տե՛ս ստորեւ), քանզի որտեղ գութանն է, այնտեղ էլ ակօսը պիտի լինի, կամ էլ կարող են լինել երկնային արտի մօտ (կամ հէնց դրա մէջ): Իսկ եթէ սա հասկանանք իբրեւ ջրաղացի խողովակ, ապա սա կարող է լինել դրանից քիչ հեռու: Կարեւորը, սակայն, այն է, որ երկու պարագայում էլ այս անունով մեզ հասած երկնային կերպարը պիտի կապուած լինի հացի արարման գործողութիւնների շարքին:

Ի դէպ նշենք նաեւ, որ վաք(ն) բառի վերոբերեալ երկու իմաստները կարող են ունենալ միեւնոյն ծագումը: Ակօսը, ինչպէս յայտնի է, ծառայում է նաեւ իբրեւ ջրի հոսքի ուղի արտը ոռոգելու ժամանակ: Այսինքն՝ ակօսով նաեւ ջուր է հոսում: Եւ իբրեւ ջրի հոսքի ուղի, այն լիովին համապատասխանում է խողովակին: Ներկայումս խողովակն ընկալւում է իբրեւ ամբողջովին փակ (բոլոր կողմերից մեկուսացած) ուղի, սակայն համեմատաբար հին աղբիւներում այն պարզապէս «ջրի կամ մի այլ հեղուկի նեղ անցք» է նշանակում²⁷:

- Խողովակ. Հնարաւոր է սա եւս ընկալել իբրեւ ջրաղացի մի մասը (ինչպէս՝ վաքը): Հնարաւոր է նաեւ սա ընկալել իբրեւ Տըրի արօրի (կամ գութանի) յատուկ խողովակը, որի



Ա. Յ. ՇԵՍԻ ԱՅՏԻՎ ԾՐԻ ԻՇ ՊԻՇԱ ԲԱԴԵ
ԽԵԼԵ ԱՅՏԵՎ ԿՐԻԱՆՑ.

Նկար 2.

նզող (Bootes) համաստեղութիւնը ըստ Արաւոսի
«Երեւոյքների» 1570ի
հրատարակութեամ

27 Երկնային արտի մասին փոքր-ինչ մանրամասն տե՛ս ստորեւ:

28 ԱՃԱՌԵԱՆ, Հ., Հայերէն արմատական բառարան, Բ., 389: Հնարաւոր է նոյնիսկ, փորձել խողովակ բառի մէջ տեսնել վակ-վամբ բաղադրիչը: Այդ պարագայում չի բացառուի նաև բառիս առաջին մասի մէջ ուղի բաղադրիչի առկայութիւնը, նկատի ունենալով խողովակ-«խողովակ» բառի գոյութիւնը. տե՛ս ՄԱԼԽՍ.ՍԵԱՆՑ, Ս., Հայերէն բացատրական բառարան, Բ., 299:

միջով սերմերը ընկնում են ակօսի մէջ: Այս երկրորդ տարբերակն աւելի հաւանական է իբրեւ առաւել նախնական: Ըստ այսպիսի ընկալման սա եւս պիտի աղերսուի հացարարման գործընթացին:

- **Ջրաբաշխ (Ջրաբուղի)** անունը հնարաւոր է, որ վերաբերի Ջրհոս կենդանակերպին: Սակայն չի բացառուում նաեւ, որ սա կապ չունենայ Ջրհոսի հետ եւ նշանակի կամ արտերը ջրելու հետ կապուած մի կերպար (իբրեւ ջրուոր)²⁹, եւ կամ ջրաղացին վերաբերող մի առարկայ: Վերջին երկու տարբերակներով էլ սա կ'առնչուի հացարարմանը:

- **Սայլաթափ** անունը ենթադրաբար համարուել է Սայլի մի մասը, կամ հէնց դրա մի տարբերակը: Երկու դէպքում էլ սա եւս պիտի աղերսուի հացարարման հետ:

- **Վեցկի** անունով, ինչպէս յայտնի է, նշանակում է արօրի մի տեսակը: Այսինքն, սա արտը վարելու գործիք է, եւ սրա առնչութիւնը հացարարմանը առանձին հիմնաւորման կարիք չունի:

- **Գութանի** աստղը, ինչպէս անունն է վկայում, պիտի նշանակի երկնային գութանի կամ ամբողջութիւնը, եւ կամ միայն մի մասը: Գութանն էլ արտ վարելու ամենակատարելագործուած գործիքն է, եւ ըստ էութեան արօրի փոխարինողն է: Կապուած է հացի արարման առաջին փուլին:


Ի վերջոյ, այս շարքին հարկ է յաւելել նաեւ կոյսն կենդանակերպը: Այս աստեղատան անունը, հասկանալի է, չունի որեւէ ուղղակի առնչութիւն հացարարմանը: Սակայն, ինչպէս ստորեւ կը տեսնենք, այս աստեղատունը հացարարման հետ կապուած է ամենասերտ եւ ամենաէական կապով: Նայենք սա աւելի մանրամասն:

Գ.- ՀԱՅԻ ՄՇԱԿՈՒՄՆ ՈՒ ԿՈՅՑԱԾ

Կոյս (Կամ Կոյան) համաստեղութիւնը կենդանաշրջանի 12 աստեղատոներից մէկն է: Մեր գարաշը անում այն գտնուում է երկնքի հասարակածային մասում: Երկնային քարտէսի վրայ Կոյսը տեղակայուած է Առիւծ, Կշիռ կենդանակերպերի, Խառնարան (ատին. Crater, հայկական որոշ նոր աղբիւրներում սխալ թարգ-

29 Ըստ Վ. Բդյեանի Երեւանում արտերը ջրողմերի յորչորջումներից է և դեմ հեմց ջրբաշխ ճեւը, որ, ըստ եռթեան, նոյն ջրաբաշխի տարբերակն է: տե՛ս ԲԴՈՅԵԱՆ, Վ. Թ., Երկրագործական մշակոյթը Հայաստանում, ՀՍՍՀ ԳԱ երտ., Երեւան 1972, 328:

մանութեամբ՝ Գաւաթ), Ագռաւ, Սեքստանտ, Բերենիկէի վարսեր (կամ Բերենիկէի գէս), Եզնարած (Եզող) եւ Օձ (աւանդական Օձակիրի մի մասը) համաստեղութիւնների միջեւ (տե՛ս նկար 3):



Նկար 3.

Կոյս համաստեղութիւնը ըստ աստղալից երկնի արդի ֆարտեսի

Այս համաստեղութիւնների մի մասը որոշակիօրէն նոր ժամանակների ծնունդ են: Այսպէս, պատմականօրէն յայտնի է, թէ Երբ եւ ինչ հանգամանքների բերումով է Պտղոմէոսեան Եգիպտոսում երկնքում յայտնուել Բերենիկէի վարսեր աստեղատունը, Սեքստանտը երկինք է տարուել աւելի ուշ՝ Եան Հեւելիուսի կողմից ի յիշատակայն աստղաչափական գործիքի, որով նա 1658-1679 Դանցիգում կատարել է իր չափումները³⁰: Նոյն կերպ գիտենք, որ Օձն էլ նախկին

30 ALLEN, R. H., *Star names. Their lore and meaning*, first publ. 1899, Dover Publications, New York 1963, 376.

ՕՃԱԿԻՒ ՄԵծ ՀԱՄԱՍՏԵՂՈՒԹԵԱՆ ՄՐՈԴՄԱՆ ԱՐԴԻՒՆՔ Է ԵԼ Առանձին անունով ԵՐԿՆՔՈՒՄ ԱՄՐԱԳՐՈՒԵԼ Է 1922:



Նկար 4.

Կոյս կենդամակերպը ըստ ՄՄ թիւ 3884
ձեռագրի, թերթ 104ա

Եթէ նայենք երկնքի աւանդական բաժանմանը, զանց առնելով նորակազմ համաստեղութիւնները, ապա Կոյսից վեր՝ դէպի հիւսիս կը տեսնենք Եղող (Եղնարած), եւ սրա կողքին էլ Սայլ (Մեծ Արջ) աստեղատները։ Սայլից դէպի հիւսիս էլ Միւս Սայլն է (Փոքր Արջը), որի աստղերից մէկն էլ հէնց այսօր «Քեւեռային» կոչուող աստղն է. այս աստղին շատ մօտ է երկնքի ներկայիս հիւսիսային բեւեռը։ Այս բեւեռի շուրջ պըտըւում է տեսանելի ամբողջ երկնակամարը։ Ստացւում է, որ երկնքում Կոյսը անմիջական հարեւանն է հացի պաշտամունքի, համարման գործընթացի տարբերի հետ կապուած համաստեղութիւնների։ Սակայն Կոյսի աղերսը հացարարման հետ այս հարեւանութեամբ չի սահմանափակւում։ Աւանդաբար, մեզ հասած համարեա՛ բոլոր երկնային քարտէսների վրայ այս աստեղատունը պատկերուած է ձեռքին հացարոյախ համկ բոնած կնոջ տեսքով։ Հնդհանրապէս, եւրոպական աւանդոյթուում երկնային Կոյսի ձեռքին պատկերուում է ցորենի հասկ, կամ խուրճ եւ արմաւենու ճիւղ։ Կան պատկերներ, ուր նրա մի ձեռքին ցորեն է, միւսին՝ արմաւենու ոստ։ Մրանց հետ ներդաշնակ է նաև սրա պատկերման հայկական աւանդոյթը։ Այդպէս է Կոյս կենդամակերպի պատկերումը հայկական միջնադարեան բազմաթիւ ձեռագրերուում (տե՛ս նկար 4)³¹։ Ի դէպ, այստեղ բերուած պատկերի մէջ Կոյսի ձեռքին բոնածը հնարաւոր է համարել թէ՛ ցորենի հասկ, եւ թէ՛ արմաւենու ոստ։ Արմաւենու ոստը Կոյսի ձեռքին հասկանալու համար յիշենք, որ արմաւենին իր սրածայր ասեղնակերպ տերեւներով, ինչպէս եւ ցորենը իր սուր քիւ-

31 Նկարը վերցուած է սոյն գրքից ԲԱԴԱՎԱՆ, Հ. Ա., Օրացոյցի պատմութիւն, ՀՍՍՀ ԳԱ հրտ., Երեւան 1970, Երդիք նկար 20։

տերով, Արեւի խորհրդանիշ են³²: Այսինքն, խորհրդանշական առումով Կոյսի ձեռքին առկայ երկու բոյսերն էլ նոյնական են: Դրանք երկուսն էլ Արեւի խորհրդանիշեր են: Այսինքն, իր աւանդական պատկերագրութեամբ Կոյսը կապուած է Արեւի խորհրդանիշերի հետ:

Յունա-հռոմէական դիցաբանութեան մէջ այս համաստեղութիւնը աւանդաբար կապուել է Կերես (Ceres, Կերերա, Յերերա) դիցուհու հետ³³, որ համարուել է հացաբոյսերի աճման եւ հասունացման, երկրի աճեցնող ուժերի դիցուհի³⁴: Յայտնի է, որ այս դիցուհուն են ծօնուած եղել աշնանացան ցորենի ցանքսի եւ բերքահաւաքի տօնեղը³⁵: Արատոս Սոլացին (մօս 310-245 ն.թ. իր «Երեւոյքներ» քերթուածում երկար պատմում է այս աստեղատան մասին, դիմելով նրան իբրեւ մեծագոյն դիցուհու: Հստ Արատոսի սա աշխարհը կառավարող դիցուհի է եղել ոսկէ դարում, երբ տիրել է արդարութիւնը, չի եղել չար, եւ եղել է խաղաղութիւն: Արատոսը նրան համարում է երկնքի աստղերն ստեղծող Աստրէոսի դուստր՝³⁶: Այսինքն, ի դէմս այս աստեղատան ունենք մի հնագոյն պաշտամունքից մնացած՝ գըլխաւոր (աշխարհը կառավարող) դիցուհու կերպարը:

Շարունակենք: Աւանդաբար Կոյս համաստեղութեան գլխաւոր աստղը՝ α Virgo կոչում է Spica: Աստղիս այս անունն էլ նշանակում է հէնց «Հասկ», հացաբոյսի հասկը: Եւ երկնքում էլ այս աստղը համապատասխանում է Կոյսի բռնած հասկին: Հստ կամիլ Ֆլամարիոնի՝ «Արդէն բազում դարեր է, ինչ այս աստղի յայտնուելը երկնեում եւ ամառային երեկոներին այնուեղ լինելը կապուել է դաշտային աշխատանքների հետ եւ այդ աստղը դարձուել է բերքահաւաքի ժամանակի անձնաւորումը, խորհրդանիշը, ահա այս պատճառով էլ մեր հեռաւոր նախնիները այն տեղակայել են Կոյսի ծափ ծեռում բռնած հասկերի խրձի մէջ»³⁷:

Հնդհանրապէս, եթէ այս համաստեղութիւնը դիտարկենք առանձին, առանց ի նկատի ունենալու հացարարմանն աղերսուող՝ հա-

32 Այս մասին աւելի մանրամասն տե՛ս ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., *Օրացոյց Հայոց*, 331-338:

33 ALLEN, R. H., *Star names. Their lore and meaning*, 466.

34 *Мифы народов мира*, т. 1- 2, Советская Энциклопедия, Москва 1991-1992, т. 2, 617.

35 Անդ:

36 Տե՛ս ԱՐՄՏՈՒԻ «Երեւոյք-Աեր» ֆերքուածը, տող 105-106. ամբողջականը տե՛ս http://www.astromyth.ru/library/Arat_Events.htm:

37 *ՓԼԱՄՄԱՐԻՈՆ*, Կ., *Հայոց պատճեններ*, Երևան 1899, 327.

բեւան աստեղատները, ապա երկնքում հացաբոյսի հասկը (եւ արմաւենու ոստը) ձեռքին կնոջ կերպարը մնում է անհասկանալի: Կենդանաշրջանում Առիւծի եւ Կշիռի միջեւ կանգնած կնոջ (կոյս աղջկայ) կերպարը անհասկանալի կը մնայ, եթէ այն չդիտարկուի հացարարման ամբողջ գործընթացի եւ հացի պաշտամունքի տեսանկիւնից:

Իսկ ի՞նչ կարող է նշանակել հացարարման գործընթացին կից՝ հասկը (հասկերը) ձեռքին բռնած կնոջ կերպարը:

Սկսենք նրանից, որ հացարարման ամբողջ գործընթացը սկըզբից մինչեւ վերջ (արտը վարելուց մինչեւ թոնրի մէջ հացը թխելը) կանոնականացուած – սրբագործուած է եղել Հայոց մէջ: Այս տեւական մեծ գործընթացի բոլոր փուլերը ունեցել են իրենց կատարման յատուկ՝ ծիսականացուած կարգը եւ մինչեւ իսկ՝ երգերը: Ահա, այս կարգի մէջ գործընթացի սկիզբը՝ վարը զուտ արական զբաղում է, աւելին՝ գործընթացի այս փուլում արգելուած է եղել կանանց մասնակցութիւնը: Յայտնի է, օրինակ, որ վարի ժամանակ վար անող տղամարդուն հաց բերող աղջիկը իրաւունք չի ունեցել արտ մտնելու, եւ հացը բերել է մինչեւ արտի եզրը³⁸:

Նոյն կերպ էլ յայտնի է, որ գործընթացի աւարտը՝ հացի թխումը թոնրի մէջ եղել է զուտ իգական զբաղում եւ այր մարդը իրաւունք չի ունեցել թոնրատուն մտնելու հացաթխման ընթացքում³⁹:

Ահա, այս ամէնին զուգահեռ՝ երկնքում հացարարմանն աղերսուող մարդակերպ աստեղատների մէջ եզզողից ու Յորենքաղ Մշակից զատ ունենք կոյսը: Առաջին երկուսը յատակ արական կերպարներ են, իսկ կոյսն էլ յատակ իգական կերպար է: Ու բնական է մտածել, որ եթէ այս արական կերպարները միանշանակ կապուած են հացարարման առաջին փուլերի՝ արտի եւ այնտեղ կատարուող գործողութիւնների հետ, ապա իգական կերպարն էլ պէտք է կապուած լինի հացարարման վերջին փուլի (կամ փուլերի) հետ: Ուրեմն, կոյս կենդանակերպը պիտի ինչ-որ կերպ աղերսուի հացի թխման հետ: Իսկ ի՞նչ կերպ է հնարաւոր դա պատկերացնել: Երկնքում մենք չունենք թոնիր կամ դրան մօտ մի բան յիշեցնող աստեղատուն: (Անշուշտ, չի բացառուում, որ նման բան հնում եղած լինի, սակայն մեզ մատչելի

38 Պիկիջնեան, Հ., Հայ միջնադարեամ պատկերացումները կեմսատարածքի մասին, Շամդէս Ամսօրեայ, 2002, ՃՌԶ., թիւ 1 – 12, 441 – 460:

39 Ես իմք 1985ին Գորիսի Տեղ գիւղում ականատես եմ եղել, թէ ինչպէս տարեց կամայք, ամօք համարելով, երեսները շրջում, թաքցնում էին, երբ հաց բխելու ընթացքում տղամարդ էր մտնում թոնրատուն:

աղբեկաներում ներկայումս այդպիսի աստեղատան ակնարկ անգամ չկայ⁴⁰):

Սա հասկանալու համար յիշենք, որ ցորենի կալսումից յետոյ հացարարման գործընթացում տեղ ունի երկանքով ցորենը աղալը: Երկանքը համեմատաբար փոքր չափերի երկու գլանաձեւ տափակ քարերից կազմուած գործիք է, ուր քարերը դրւում են իրար վրայ եւ ձեռքի ուժով պտտեցուում են քարի կենտրոնում յատուկ անցքի մէջ սարուած փայտեայ առանցքի շուրջ: Սա օգտագործուել է ցորենից ձաւար աղալու համար, իսկ նախքան ջրաղացի ի յայտ գալը՝ նաեւ ալիւր աղալու համար⁴¹: Սա, բնականաբար, ջրաղացի նախատիպը պիտի եղած լինի: Ջրաղացը (որոշ տեղերում նաեւ՝ հողմաղացը) նոյն երկանքի առաւել կատարելագործուած, հօրացուած տարբերակն է, ուր մարդու ուժի փոխարէն օգտագործուում է ջրի (կամ քամու) ուժը⁴²: Ըստ էութեան, երկանքը հացարարման գործընթացում ունի նոյն տեղը, ինչ եւ ջրաղացը: Երկան(ք) բառն ինքը ունի նաեւ «ջաղացի, ջաղացի քար» իմաստ⁴³: Մեր խնդրի համար էականն այն է, որ երկանք աղալը աւանդաբար համարուել է կանացի զբաղում: Ի դէպ, սա վկայուած է նաեւ Սասնայ Ծռերում, ուր Սասունից պահանջուող հարկի մէջ կան նաեւ 40 ազապ աղջիկ, կամ կարճահասակ կին (կարճ կին)՝ երկանք աղալու համար⁴⁴: Այսինքն, կալսումից անմիջապէս յետոյ հացարարման գործընթացում ունենք մի պարտադիր փուլ, որ նախնական աւանդոյթի համաձայն պիտի կատարուած լինի կանանց կողմից:

Ստացանք, որ հացարարման հինգ հիմնական փուլերից առաջին երկուսը զուտ արական են (վար (ու ցանքս) եւ հունձք (եւ սայլով խրձերի կրում)), իսկ վերջին երկուսը՝ զուտ իգական (երկանքով աղալ եւ թոնրի մէջ թխել): Մնաց միջին փուլը՝ կալսումը: Կալսումը, ինչպէս նշուեց, կատարուել է կամնի կամ սայլի միջոցով: Յայտնի է

40 Իրեւ երկնային Թոնիրի հաւանական «քեկնածու» կարելի է նշել արդի Խառնարան (Crater) համաստեղութիւնը, որ անմիջապէս կից է Կոյսին:

41 Տե՛ս ՄԱԼԽԱՍԵՎԱՆՑ, Ս., Հայերէմ բացատրական բառարան, Ա., 590:

42 Ջրաղացի եւ ձեռքով աշխատեցուող երկանքի միջեւ եղել է նաեւ անասունների ուժով գործի դրուող՝ էշի երկանքը, որի բարերը, բնականաբար, եղել են ձեռքի երկանքի բարերից աւելի մեծ: Բնականաբար, սրա նախատիպը եւս պիտի եղած լինի ձեռքի երկանքը:

43 ԱՃԱՌԵՆԱՆ, Հ., Հայերէմ արմատական բառարան, Բ., 61:

44 Տե՛ս, օրինակ, ԱԲԵՂԵՍԵՆ, Մ., (խմբ.), Սասնայ Ծռեր, Ա., Պետական հրատապակչութիւն, Երևան 1936, 70, 183, 264 346 և անուան:

նաեւ, որ աւանդաբար կալին մասնակցել են նաեւ երեխաներ, որոնց նստեցրել են կամնի վրայ: Այսինքն, սեռի առումով սա հարկ է համարել չէզոք գործընթաց (մանկահասակ երեխան, թէպէտ սեռային յատկանիշներ, բնականաբար, պիտի ունենայ, սակայն տարիքի բերումով տակաւին սեռային գործառոյթներ չունի):

Միեւնոյն ժամանակ, ունենք, որ հացարարման գործընթացին կից կայ նաեւ պատրաստի արտադրանքի ընծայում: Սա կարող է լինել կամ հունձքից յետոյ՝ հնձուած հասկի (կամ հասկերի խրձի) ընծայում, կամ կալից յետոյ՝ հատիկ ցորենի (կամ գարու եւն.) ընծայում եւ կամ՝ հացը թխելուց յետոյ՝ վերջնական արդիւնքի՝ պատրաստի հացի ընծայում: Այս երեք տեսակի ընծայումների վկայութիւններն էլ մեզ հասել են հայկական ազգագրական սովորութիւնների մէջ: Այսինքն, հիմք ունենք մտածելու, որ այս երեք տեսակի ընծայումներն էլ հնում պիտի եղած լինեն: Իսկ սրա հետ մէկտեղ մեզ հասած տարբեր ազգագրական վկայութիւններում հացի (հասկի, հատիկի, կամ թխուած հացի) ընծայում կատարողը անպայման իգական սեռի է: Սա կարելի է նաեւ բնական համարել, զի վարից ու հունձքից յետոյ, փաստօրէն, աւարտում է հացարարման գործընթացի զուտ արական մասը: Եւ կալով (կալից յետոյ) էլ սկսում է զուտ իգական մասը: Այսինքն, պատրաստի արտադրանքի՝ հացի կամ հատիկի ընծայումը արդէն ամբողջ գործընթացի իգական մասում է⁴⁵: Եւ ահա՝ կոյս կենդանակերպն էլ պատկերում է հէնց հասկը (հասկերի խուրձը, արմաւենու սստը) ձեռքին իգական կերպար: Այսինքն, ի դէմս այս աստեղատան մենք ունենք հացի բերքի ընծայում կատարող իգական կերպարը: Իսկ ընծայումը որոշակի առումով հացարարման գործընթացի տրամաբանական ամբողջացումը, ամփոփումը, աւարտն է:

Ստացւում է, որ հացի արարման ամբողջ գործընթացը տրուհուած է եղել 5 հիմնական փուլերի, որոնցից առաջին երկուսը (վարու ցանքսն ու հունձքը եւ խրձերի կալատեղ փոխադրելը) եղել են զուտ արական գործեր, միջինը (կալը) եղել է չէզոք սեռի (երեխաներին յատուկ) գրաղում, իսկ վերջին երկուսը (երկանքով աղալն

45 Ուշագրաւ է, որ հայ ազգագրութեան մէջ պահպանուած է հացի բերքի երախայրիքը գերդաստանի աւագագոյն կնոջը՝ նանեկին ընծայելու աւանդոյթ. տե՛ս ՄինիթԱՐԵԱՆՑ, Ա., կենցաղ եւ զրադմունք, Երկրագործի կեամբը, Էմինեան ազգագրական ժողովածու, Ա., 1901, 285:

ու թոնրի մէջ թխելը) եղել են բացառապէս իգական զբաղումներ՝⁴⁶։ Ստացուեց, հացարարման գործընթացը կատարող անձերի այսպիսի սեռային յաջորդականութիւն։ տղամարդ, երեխայ, կին։ ի դէպ, հացարարման գործընթացի մասնակիցների այսպիսի սեռային կազմը լիովին զուգահեռ է մարդկային ընտանիքի մասին աւանդական պատկերացմանը, ուր դարձեալ տղամարդու եւ կնոջ միջեւ զաւակն է, իբրեւ այդ երկուսի համատեղ ստեղծագործութիւն։

Կոյսի հացարարման աւարտական փուլի հետ կապը՝ վկայուած է նաեւ այլ հնդեւրոպական ազգերի աւանդոյթում։ Այսպէս, ըստ Ռ. Ալենի՝ հիւսիսային Անդլիայում եւ հարաւային Սկովտիայում եղել է սովորութիւն, ըստ որի հացի բերքահաւաքի վերջում, վերջին արտի վերջին հասկերից ձեւաւորել են մարդակերպ մի խուրձ, զգեստաւորել են դա ցնցոտիներով եւ տուել են երեխաների ձեռքը։ Խսկ աւելի հնում կոյսը եղել է բերքի դիցուհու կերպարը, որ մանգաղն ու խուրձը ձեռքին, հնձուորների բազմութեամբ շրջապատուած, երաժշտութեան հետ հետեւել է արտից ագարակ գնացող վերջին սայլին՝⁴⁷։ Այս նկարագրութեան մէջ ունենք ցորենի մշակութեան հետ կապուած մեր համարեա բոլոր համաստեղութիւնների պատկերումը. վերջին սայլը (քնականաբար՝ քարշող եզներով ու եզները վարողով), հնձուորները (Յորենքաղ մշակը), կոյսը՝ հասկը ձեռքին։

Այսինքն, տեսնում ենք, որ թէ՛ Հայոց, եւ թէ՛ որոշ այլ ազգերի պահպանած աւանդոյթի համաձայն կոյս կենդանակերպը ամենակարեւոր մասնակցութիւնը ունի հացարարման գործընթացին։ Սա հացարարման գործընթացի տրամաբանական եւ ծիսական աւարտը խորհրդանշող կերպար է։ Ըստ այսմ, սա պիտի լինի բացառիկ կարեւոր կերպար։ Պատահական չէ, որ ըստ հին Բարելացիների կոյսի գլխաւոր աստղը՝ α Virgo (Spica) համարուել է թէլի (գլխաւոր աստծու) կինը⁴⁸։ ի դէպ, այս նոյնի զուգահեռն ունենք նաեւ յունական դիցաբանութեան մէջ, ուր գլխաւոր աստծու՝ Զեւսի կինը (որ եւ նրա քոյրն է)՝ Հերան նաեւ կոյս է։ նա ամէն տարի (որոշ տարբերակներում պարզապէս յաճախ) լողանում է Արգոսի մօտ գտնուող Կանա-

46 Հնարաւոր է նաեւ հացի արարման գործընթացը տրոհել ոչ թէ 5, այլ 7 փուլի։ Այս պարագայում Առաջին 4ը (Վարը, ցանքսը, հունձքը եւ խրձերի կալատեղ փոխադրումը) կը լինեն արական, միջինը (Կալը)՝ չէզոք եւ վերջին 2ն է (աղալն ու թինելը)՝ իգական զրադումներ։

47 ALLEN, R. H., *Star names. Their lore and meaning*, 461.

48 Տե՛ս Յոյն տեսում, 468։

Թոս (Կանա) աղբիւրում (առուակում) եւ վերականգնում կուսութիւնը⁴⁹: Այսինքն, այս երկու տեղերում էլ Կոյսը գլխաւոր աստուծոյ կինն է: Հնարաւոր է, թերեւս, սրան զուգահեռ դնել նաեւ հայկական Աստղիկ դիցուհու նշանաւոր լոգանքները Մշոյ դաշտում, յիշելով, որ Աստղիկն էլ Վահագնի սիրեցեալն է⁵⁰: Այստեղ երկու կարեւոր հանգամանք կայ: Առաջինը, որ կուսութեան վերականգնումը իմաստունի միայն դրա «կիրառումից», այն է՝ ամուսնութիւնից առաջ: Ուրեմն, այս կուսութեան վերականգնումը անպայման պիտի նախորդի ամուսնութեանը: Երկրորդ հանգամանքն էլ այն է, որ Հերայի հետ կապուած պատմութեան մէջ էական է նաեւ այս (կուսութեան վերականգնման) իրադարձութեան ամենամեայ լինելը: Սա միանշանակ կապում է այս գլխաւոր դիցուհուն Ամանորի տօնի եւ ծէսերի հետ: Սակայն մեր խնդրի համար առաւել էական է սրա զուգահեռ լինելը Հայոց հնագոյն նաւասարդեան տօնի մէջ կենտրոնական դիրք ունեցող ծիսական ամուսնութեանը, որ կատարուել է թագաւորի եւ անպայման կոյս քրմուհու մասնակցութեամբ: Այսինքն, նաւասարդեան տօնի մէջ եւս կոյսը թագաւորի (որ նոյնն է, թէ՝ գլխաւոր աստուծոյ) կողակիցն է: Փաստօրէն, ստացւում է, որ հացի արարման ծիսականացուած գործընթացի տրամաբանական աւարտը՝ հացի ընծայումը վերապահուած է գլխաւոր դիցուհուն՝ դիցարանի գլխաւոր էակի կողջը:

Յատկանշական է նաեւ Կոյս կենդանակերպի դիրքը երկնքում: Երկնային քարտէսի վրայ խաւարածրի այն հատուածը, որ Կոյսի հակառակ (դիմացի) կողմում է, զբաղեցնում է Զկներ կենդանակերպը: Իսկ ներկայիս Զկներ աստեղատան ձկների արանքում շումերագրադական աղբիւրներում առկայ է Արտ (Ար) կոչուած աստեղատունը⁵¹: Սա համապատասխանում է ներկայիս Աndr, β Pegasi, α Pegasi եւ γ Pegasi աստղերով կազմուած ուղղանկիւն պատկերին, որ երբեմն կոչւում է նաեւ «Պեգասի ուղղանկիւն»: Սրա կողքն է նաեւ

49 ПАВСАНИЙ, *Описание Эллады*, т. 1, «Ладомир», Москва 2002, 190, II, 38.2, նոյնի մասին տե՛ս Աաեւ ГРЕЙВС, Р., *Мифы древней Греции*, в *Прогресс*, Москва 1992, 38.

50 Այս զուգահեռի օգտին է վկայում եւ այն, որ Կոյս կենդանակերպը համապատասխանել է Աստրեա (Astraea) դիցուհուն, որի անունը միանշանակ նոյնական է Աստղիկի անուան հետ. այս մասին տե՛ս ստորեւ:

51 VAN DER WAERDEN, B. L., *Babylonian Astronomy*. II. The Thirty-six Stars, Journal of Near Eastern Studies, v. VIII, 1949, 6-26. Աաեւ Բ. ВАН-ДЕР-ՎԱՐДЕН, *Пробуждающаяся наука II. Рождение астрономии*, в *Наука*, Москва 1991, 80-86.

Հնագոյն շումերական աղբիւրներում Արին կոչուած աստեղատունը⁵² (ներկայիս Եռանկիւնի համաստեղութիւնը եւ ց Andr աստղը միասին), որի անունը նշանակում է Արօր (Հայերէն կարող է լինել նաեւ Խոփ, Վեցկի, Գութանի աստղ): Այսինքն, Երկնքում Պոյսը Արտի նկատմամբ հակաղէր դիրք ունի: Ահա սրան զուգահեռ յիշենք վերն արդէն վկայաբերուած հայկական աւանդոյթը, համաձայն որի, արտում վար անող տղամարդուն հաց բերող կինը (աղջիկը) իրաւունք չի ունեցել արտ մտնելու եւ ուտելիքը բերել-հասցրել է մինչեւ արտի եզրը: Այսինքն, (կարի փուլում) արտն ու կինը իրարից բաժանուած են եղել յատուկ ծիսական արգելքով: Եւ այս աւանդոյթը Հայոց մէջ կենդանի է եղել մինչեւ ի դարի սկիզբները: Ի դէպ, սա նշանակում է նաեւ, որ հին միջագետքեան աղբիւրներով վկայուած Արտ (Իկ) համաստեղութիւնը ոչ թէ պարզապէս արտ է նշանակում, այլ հէնց վարի փուլում գտնուող արտ, քանի որ ինչպէս գիտենք, վարից յետոյ (քաղհանի եւ յատկապէս բերքահաւաքի փուլերում) ցորենի արտի եւ իգական սեռի միջեւ ծիսական արգելք չկայ: Եւ այս համաստեղութեան այսպիսի ընկալման օգտին է վկայում նաեւ այս երկնային արտին կից Արին - Արօր, Խոփ, կամ Վեցկի համաստեղութեան գոյութիւնը, որ ցուցանում է, թէ արտը իրօք վարի փուլում է:

Ստանում ենք, որ Երկնքում Կոյսի եւ Արտի դասաւորութեան մէջ արտայայտուած հակաղը ութիւնը առկայ է նաեւ մինչեւ ի դարը հասած հայկական ազգագրական աւանդոյթի մէջ:

Ի դէպ, հնարաւոր է, որ Հացարարման հետ աղերսուող աստեղատները այսքանով չեն սահմանափակւում:

Կոյսից դէպի արեւելք Կշիռ կենդանակերպն է: Եւ Երկնային Կշեռքը որոշակիօրէն կապուած է նաեւ Կոյսի հետ: Այսպէս, ըստ Ռւ. Օլկոտի վկայութեան, Կոյսը համապատասխանել է Աստրեա (Astraea) Օլկոտի վկայութեան, Կոյսը համապատասխանել է Աստրեա (Astraeus)-ի եւ Արշալոյսի (Առւրողիա - Aurora)-ի դուստրը, եւ «Յրա կողքին է Կշիռը, որով նա կշռում է ըստ կանց լաւ ու վատ գործերը»⁵³: Ըստ Հեսիոդոսի էլ՝ Կոյսը Եռւմարդկանց լաւ ու վատ գործերը»⁵⁴: Թեմիսն էլ, գիտենք, որ համարուել պիտերի եւ թեմիսի դուստրն է:

52 Ս.յ աստեղատան անունը ^{առաջին} APIN կարելի է ընթերցել նաև ^{առաջին} URU, կամ ENGAR, որոնք բոլորն ել հայերէն զուգահետ - համարժեքներ ունեն ի դէմս Խո-փին, արաւ(ր), վար(ս), Անեար գութան եւ այլ բառերի. ան'ս ԴԱ.ԽԹԵՍՆ, Ա., Հայոց աստղային դիցարանին, Երևան 2004, 21-25:

53 OLCOTT, W. T., *Star lore: myths, legends and facts*, Dover Publ., Mineola, New York 2004, originally published New York, G. P. Putnam's Sons 1911, 382.

54 Անդ:

է արդարադատութեան հովանաւոր դիցուհի: Այսինքն, ի դէմս Կոյսի ունենք մի կերպար, որ նաեւ կշռելու գործառոյթ ունի: Անշուշտ, մարդկանց գործերը կշռող դիցուհին երկնքում լինելը լիովին տրամաբանական է: Սակայն հարկ է բացատրել հացարարման գործընթացի հետ դիցուհու նաեւ ա'յս գործառոյթի աղերսը: Հացարարման հետ նրա աղերսը մենք արդէն տեսանք, եւ տեսանք նաեւ, որ այդ աղերսը շատ ծանրակշիռ է: Իսկ հացարարման եւ արդարադատութեան միջեւ աղերսները ակնյայտ չեն:



Նկար 5.

Կշիռ կենանակերպը ըստ ՄՄ 3884
ձեռագրի, թերթ 11թ

Հացարարման գործընթացում կալսումից յետոյ տեղափոխելու եւ պահեստաւորելու համար ցորենը լեցնում են պարկերի մէջ: Եւ պարկերի մէջ լեցնելուն զուգահեռ նաեւ չափում են ցորենի քանակը: Չափել հնարաւոր է թէ՛ ծաւալը չափող գործիքով (ասենք՝ կոտով, թասով, դոյլով եւն), եւ թէ՛ կշիռը որոշելով: Այս վերջինը հէնց նշանակում է կշռել: Այսինքն, կշռելը, որով նաեւ՝ կշիռ աստեղատունը եւս տեղ ունեն հացարարման գործընթացում:

Ի դէպ, չափելը, իբրեւ հացա-

րարման գործընթացի մի բաղադրիչ է նաեւ Հեսիոդոսի «Գործեր եւ օրեր» երկում: Այստեղ ցորենի (կալսած, թեփահան արուած) հատիկները պահեստաւորելուց առաջ հրահանդ է տրուում նախ զգուշութեամբ չափել եւ ապա միայն լեցնել տարողութիւնների մէջ⁵⁵:

Այսու, հիմք ընդունելով շրջապատի այլ համաստեղութիւնների գործառութային կապուածութիւնը իրար հետ եւ հացարարման հետ, հնարաւոր է կշիռ կենդանակերպը եւս համարել արտայալութիւնը հացարարման մի հերթական փուլի: Ի դէպ, հայկական աղբիւրներում կշիռ կենդանակերպը պատկերում է կնոջ տեսքով, որ

55 ГЕСИОД, Работы и дни, в книге: ВЕРЕСАЕВ, В. В., Сочинения, т. 3, ОГИЗ, Москва 1948, 321 – 345, 336 (579 – 600).

ձեռքերով պահում է կշեռքի նժարները (Ակար 5)⁵⁶: Այս կապակցութեամբ տեղին է յիշել, որ ըստ մեզ հասած հայկական աւանդոյթի Հայկն (Orion) համաստեղութեան մէջտեղի երեք միաշար պայծառ աստղերը (δ Ori, ε Ori, ζ Ori) ի թիւս այլ անունների կոչուել են նաեւ «Զափ ու կշիռ»⁵⁷: Այսինքն, ստացւում է, որ երկնքում մէկի փոխարէն ունենք «կշիռ» յորջորջումով երկու աստեղատուն:

Եւ այս իրողութիւնը կարիք ունի բացատրութեան: Սրա բացատրութիւնը թողնելով յետագայ շարադրանքին, այստեղ նկատենք միայն, որ իր այս անունով Հայկն համաստեղութիւնը, որով նաեւ՝ Հայկի կերպարը եւս կապւում է հացարարման գործընթացի աւարտական փուլերին:

Հին Եգիպտոսում էլ Կոյս կենդանկերպը աղերսուած է եղել իզիս դիցուհու հետ, եւ համարուել է, թէ վերջինս Ծիր Կաթինն առաջացրել է՝ երկնքում շաղ տալով ցորենի անհամար հատիկներ: Այս նոյն առասպելի մի այլ տարբերակի համաձայն իզիսը ցորենի մի խուրճ է վայր գցել՝ իրեն հետապնդող Տիփոնից փախչելիս, եւ Տիփոնն էլ, շարունակելով նրան հետապնդել, շաղ է տուել դա երկնքով մէկ, որով առաջացել է՝ Կաթնածիրը, որ նման է շողշողացող ցորենի ոսկեգոյն հատիկների⁵⁸:

Այս պատումը շատ առումներով նման է Յարդագողի Հետքի առաջացման հայկական պատումին: Եգիպտական պատումի մէջ երկընքում շաղ տրուածը ցորենի հատիկներն են իսկ հայկականում՝ յարդը, որ ցորենի հասկերը կալմելուց յետոյ առաջացած միւս արդիւնքն է:

Հայկական պատումի հետ սրա աղերսը նաեւ այն է, որ հայկականում յարդը երկնքում շաղ տուողը Վահագնն է, իսկ Եգիպտականում ցորենը շաղ է տալիս իզիս դիցուհին, որ նոյն Կոյս կենդանակերպն է, եւ Կոյսն էլ, միւս կողմից համադրուած էր (աե՛ս վերը) Աստրեա (Astraea) դիցուհուն, որ իր անունով նոյնական է Հայոց Աստղիկին: Իսկ Աստղիկի մասին էլ գիտենք, որ նա Վահագնի սիրեցեալն է: Այսինքն, հայկականում ունենք, որ դիցական զոյտի արական կերպարն է շաղ տալիս յարդը, Եգիպտականում՝ նոյն զոյտի

56 Նկարը վերցուած է ԲԱԴԱԼԵԱՆ, Հ., *Օրացոյցի պատմութիւն*, Աերդիր Ակար 21:

57 Տե՛ս ԵՐԵՄԻԱ. ՄԵՂՐԵՑԻ, Բառգիրք Հայոց, ԱՄԱԼԵԱՆ, Հ. Մ., (ՔԱՅ. ԲԱԳԻՐՔ), առաջ եւ ծեօթ.), ՀԱՍՀ ԳԱ հրտ., Երևան 1975, 178:

58 OLCOTT, W. T., *Star lore: myths, legends and facts*, 383.

իգական կերպարը շաղ է տալիս ցորենը: Երկու դէպքում էլ շաղ տուողը նոյն զոյգն է, եւ ինչպէս հայկականում ու եգիպտականում զոյգի հակառակ կէսերն են շաղ տուողը, նոյն կերպ էլ իրար հակառակ են նաեւ նրանց շաղ տուած՝ ցորենի կալսումից առաջացած բաղադրիչները:

Մի այլ ընդհանրութիւն էլ հայկականի հետ այն է, որ ի գէմս Տիփոնից փախչող կոյսի ունենք զուգահեռը հայկական հրաշապատում հէքեաթներում եւ Սասնայ Ծռեր դիցավէպում ջրարգել վիշապին զոհ տարուած կոյս աղջկան: Յիշենք, որ հայկականի որոշ տարբերակներում աղջկայ հետ միասին վիշապին «նուէր» (իմա՞ զոհ) են տանում նաեւ հաց (գաթա) կամ փլաւ: Այս երկուսն էլ իրենց խորհրդաբանական իմաստով նոյնական են ցորենի հետ: Այսինքն, երկու դէպքում էլ ունենք վիշապից խուսափել ջանացող կոյս աղջիկ, եւ այս աղջիկը ձեռքին ունի կամ ունեցել է ցորենի հասկ կամ հասկերի խուրճ, կամ ցորենից պատրաստուած ուտեստ:

Ցորենի մշակութեան հայրենիքը, ինչպէս յայտնի է, լիովին համապատասխանում է պատմական Հայաստանի տարածքին։ Այս մասին միանշանակ է հետազոտողների տեսակէտը։ Այսպէս, ըստ Նիկոլայ Վավիլովի՝ «... բազում գործօնների լոյսի ներքոյ մնջ համար անկասկած է, որ այն հիմնական տարածքը, որում զարգացել է տեսակների առաջացման գործընթացը, որ յանձեցրել է ցորենի, գարու և տարեկանի արդի տեսակների ձեւալորմանը, Առաջաւոր Ասիան է՝ ներառեալ Անդրկովկասը։ Այսեղ կենտրոնացած է հսկայական ներուժ՝ տեսակների, և նոյնիսկ՝ սեռերի, որ գենային առումով որոշակիօրէն միասնական են, այդ բուռում, բազում տեղաբնիկ (Էնդեմ) տեսակներ, աշխարհի այլ վայրերում յայտնի չեն գիտութեանը։ Միայն Անդրկովկասում յայտնաբերուած են ցորենի բոլոր չորս գենունները, այսինքն՝ բրոմոստմների որակապէս տարբեր չորս հաւաքածոյ, որոնցով որոշուում է ցորենի տեսակային հիմնական ամբողջ բազմազանութիւնը։ Հենց այսուղի է՝ ապշեցուցիչ բազմազանութեամբ կենտրոնացած են մշակովի

59 Ի դեպ, հայկական հեթեարքներում եւ դիցավկպում առկայ այս աղջիկը անպայման կոյս պիտի լինի: Թէպէս դա յատուկ չի Եշուում բանահիւսական աղքիւրներում, այդուհանդերձ նրա կոյս լինելուն իրքեւ ապացոյց յիշենք, որ ըստ բոլոր բանահիւսական աղքիւրների այս աղջիկը ամուսնացած չէ, եւ իրքեւ տղայի սիրագործութեան վարատրութիւն թագաւորք իր այս դասերը կնութեան է տալիս (առաջարկում) տղային: Խակ հայկական աւանդական պատկերացումների համաձյն նոր ամուսնացող աղջկայ կոյս լինելը պարտադիր է: Ուրեմն, իրքեւ հարսնացու, այս աղջիկը պիտի անպայման կոյս լինի:

տեսակները ...»⁶⁰ (ընդգծումները՝ Գ.Բ.): Մի այլ տեղ նոյն հեղինակը նշում է. «Խորհրդային Միութեան սահմաններում ցորենի տարբեր տեսակների առանձնայատուկ մեծ քանակութիւն մենք ունենք Հայաստանում: Այս տարածքում յայտնարերուած է վայրի ցորենների մեծ քազմագանութիւն: Բնաւ կասկած չկայ, որ սա մշակովի ցորենի հիմնական հայրենիքն է»⁶¹ (ընդգծ.՝ Գ.Բ.):

Հստ այս եւ այլ տուեալների ցորենի եւ գարու մշակութիւնը սկիզբ է առել պատմական Հայաստանի տարածքում: Իսկ այս հացարոյսերը մարդկութեան մեծագոյն մասի համար հիմնական սնընդամթերքն են (չհաշուած հարաւ-արեւելեան Ասիայի երկրները, ուր այդ նոյն դերով հանդէս է գալիս բրինձը եւ Ամերիկեան մայր ցամաքը, ուր հիմնական հացարոյսը եղիպտացորենն է): Այսօր դժուար է մինչեւ իսկ պատկերացնել, թէ ի՞նչ կարգի ցնցող, դարակազմիկ իրադարձութիւն պիտի ժամանակին եղած լինի այս մշակաբոյսերի մշակութեան սկզբնաւորումը, դրանց մշակութեան ձեւերի, գործիքների, կանոնների յայտնաբերումը եւ, ի վերջոյ, հէնց մշակովի տեսակների ստացումը: Դա, փաստօրէն, մեծագոյն յեղափոխութիւնն պիտի եղած լինի մարդկային քաղաքակրթութեան մէջ, որպէս մննդի ապահովման որակապէս նոր սատիճան, որ եւ բնականօրէն կը յանձեցնէր կեանքի ապահովութեան էական բարձրացմանը (սովի վտանգի կտրուկ նուազմանը) եւ սրանով՝ բնակչութեան քանակի կտրուկ աճի⁶²: Հացի կարեւորութիւնը այնքան մեծ է Հայոց կեանքում, որ մինչեւ օրս հայերէնում սնունդ ընդունելը անուանում է

60 ВАВИЛОВ, Н. И., *Происхождение и география культурных растений*, "Наука", Ленинград 1987, 343 – 344.

61 ၁၂၁၆, ၃၃၅:

61 օյցա, 355:
62 ի դեւ, հնարաւոր է՝ հեծ սա՛ եղած լինի պատճառը (կամ պատճառներից մէկը) այն իրողութեան, որ տակաւին վաղնջագոյն ժամանակներից սկսեալ դիտում է մարդկային մշակութակիր հոծ զանգուածների արտահոսք պատմական Հայաստանի տարածքից: Հացարոյսերի մշակման յայտնագործումը, յանձեցնելով սենդի ապահովման բարձր մակարդակի, բնականօրեն պիտի յանձեցներ բնակչութեան բանակի կտրուկ աճի: Իր հերթին՝ բնակչութեան բանակի կտրուկ աճն էլ բնականօրեն պիտի յանձեցներ նաև շրջապատի նկատմամբ այդ բնակչութեան խորութեան, որով եւ հաւաքական ուժի գգալի աւելացմանը: Սա էլ պիտի յանձեցներ երկու հետեւանքի. առաջին՝ որ Հայաստանը կը դառնար եապէս պաշտպանուած հարեւանների ուսնագութիւններից: Եւ երկրորդ՝ որ շրջակայ տարածքները շատ մատչելի կը դառնային Հայաստանի բնակիչների զանգուածային արտագաղթերի ու վերաբնակեցման համար: Երբորդն էլ այն է, որ բնակչութեան արագ անը բնականօրեն պիտի խնդիր դներ կենսական նոր տարածքներ ձեռք քերելու՝ քանի որ քուապէս անած բնակչութեան համար նախնական սահմանափակ տարածքները պիտի լինեին ոչ բաւարար:

«հաց ուտել»: Այսինքն, մարդկային սնունդը պարզապէս նոյնացուած է հացի հետ: Հստ այսմ լիովին բնական է, որ հացի մշակութիւնը կանոնականացուէր, սրբացուէր այն սկզբնաւորողների կողմից: Եւ, քանի որ այդ միեւնոյն (պատմական Հայաստանի) տարածքում է կատարուել-աւարտուել երկնքի բաժանումն աստեղատների, բնական է, որ հացարարմանը վերաբերող հիմնական առարկաները եւ գործող անձերը իրենց տեղերը ստանային նաեւ աստղալից երկնքում իրեւ պաշտամունքի հասցուած սրբազն իրողութիւններ:

Բնական է, որ տեղի օրացոյցը եւս, որպէս կրօնական իրողութիւն, պիտի իր վրայ կրէր այդ նոյն՝ հացի-հացարարման պաշտամունքի դրոշմը:

Հայոց հնագոյն Ամանորի-Նաւասարդի տօնի հետ կապուած խորհրդանշանային, ծիսական, պաշտամունքային իրողութիւնները քնննելիս մենք տեսանք, որ այդ տօնը միանշանակ աղեքուել է հացի պաշտամունքի եւ յատկապէս՝ հացարարման վերջին – աւարտական փուլի հետ: Իսկ այդ ծիսականացուած գործընթացի վերջում, ինչ-պէս տեսանք, առկայ է հասուն հասկի (հասկերի խրձի) եւ կամ թխուած հացի ընծայումը տաճարին (պաշտամունքի վայրին): Եւ այդ ընծայումն էլ անպայման կապուած է իգական կերպարի՝ կոյսի հետ: Եւ այս կոյսի կերպարն էլ առկայ է երկնքում ի դէմս կենդանաշրջանի կոյս աստեղատան: Այսինքն, կոյս կենդանակերպը երկնային կերպարն է հացի արարման ծիսականացուած գործընթացի աւարտական փուլն իրականացնողի:

Դ.- ՆԱԽԱՀԱՅԿԵՍԱՆ ՕՐԱՑՈՅՑԻ ՍԿԻԶԲԸ

Արդ, ի մի բերենք այն բոլոր «մեկնարկային» տուեալները, որոնց միջոցով պիտի փորձենք գտնել նախահայկեան օրացոյցի սկիզբը:

ա. Հայոց հնագոյն Ամանորի տօնը սերտօրէն կապուած է եղել հացի պաշտամունքի հետ: Ամանորին կատարուել է հացի նոր բերքի՝ երախայրիքի ընծայում եւ օրհնութիւն:

բ. Հայոց Ամանորի տօնը կատարուել է աշնանացան ցորենի բերքահաւաքի սկզբում՝ ամառնամուտից մօտ մէկ շաբաթ առաջ:

գ. Հացաբոյսերի մշակութեան գիւտը կատարուել է Հայաստանում, եւ ունեցել է դարակազմիկ նշանակութիւն: Հացարարման բոլոր փուլերը սրբագործուած ու ծիսականացուած են եղել վար ու ցանքսից մինչեւ հունձքը եւ նոր բերքի ընծայումը:

դ. Հայաստանում է կատարուել – աւարտուել նաեւ երկնքի բաժանումն ըստ համաստեղութիւնների, եւ հացարարման բոլոր հիմնական փուլերի խորհրդանիշ – պատկերները տեղ են գտել աստղալից երկնքում իրեւ երկրի վրայ կատարուող հացարարման ծիսական գործողութիւնների շարքի երկնային արտայայտութիւն:

ե. Ամանորի տօնին նորահաս հացի ընծայումը վերապահուած է եղել իգական մի կերպարի, որի երկնային մարմնաւորումն է Կոյս կենդանակերպը: Եւ այս աստեղատան գլխաւոր աստղն էլ կոչուել է (ու մինչեւ այժմ էլ կոչումն է) «հացարոյսի հասկ» նշանակող բառով՝ Spica (Սպիկա):

զ. Այս ամէնի հետ մէկտեղ յիշենք, որ Հայաստանում շատ վաղուց կիրառուել է տօնի (ի մասնաւորի՝ գլխաւոր տօնի) օրը պաշտուող էակի երկնային կերպարի աստղի ծագումով որոշելու աւանդոյթ: Մրա վկան է Հայաստանում երկուսուկէս հազար տարուց աւելի կիրառուած Հայկեան օրացոյցը, որի տարեմուտը թէպէտ եղել է շարժական, այդուհանդերձ տարեկան գլխաւոր տօնի օրը որոշուել է Հայկն աստեղատան գլխաւոր աստղի առաջին առաւտօտեան ծագումով՝ արեգակնային ամբարձումով: Անշուշտ, այս նոյնը կիրառուել է նաեւ Նախահայկեան օրացոյցում, որ եղել է առաւել աստեղային, քան արեգակնային օրացոյց:

Ահա մեկնարկային տուեալների այն փաթեթը, որի միջոցով պիտի փորձենք գտնել առաջադրուած հարցի պատասխանը:

Նախքան առաջ անցնելը հարկ է որոշ ճշգրտումներ անել մեր ցուցակի այս վերջին կէտի վերաբերեալ: Բանն այն է, որ աստղերի տարբեր տեսակի ծագումների (նաեւ՝ մայրամուտերի) միջոցով ճշգրիտ ժամանակներ որոշելը հնարաւոր է միայն սահմանափակ ժամանակամիջոցների ընթացքում: Ինչպէս տարբեր առիթներով տարբեր տեղեր նշուել է, երկու գործօն կան, որ սահմանափակում են դնում ժամանակ որոշելու այս ճշգրիտ եղանակի կիրառելիութեան վրայ: Առաջինը բոլորիս քաջ յայտնի գալարապտոյտի երեւոյթն է: Երկրի պտտման առանցքը (բեւեռային առանցքը) դանդաղ փոխում է իր դիրքը տարածութեան մէջ՝ մօտ 26000 տարում գծելով մի կոն խաւարածրի բեւեռի շուրջ: Այդ կոնի անկիւնային տրամագիծը $46^{\circ} 54'$ է: Սա բերում է նրան, որ այս նշուած պարբերութեամբ զգալի չափով փոխում է բեւեռի դիրքը⁶³, ուրեմն՝ փոխում են նաեւ բոլոր

63 Ներկայումս հիւսիսային բեւեռը Բեւեռային (Polaris) կոչուող աստղի մօտ է: Մօտ 13000 տարի առաջ նոյն հիւսիսային բեւեռը եղել է Վեգա (α Lyrae) աստ-

աստղերի հասարակածային կոօրդինատները: Խսկ սա էլ, իր հերթին, նշանակում է, որ պիտի փոխուեն նաեւ դրանց ծագման ու մայրամուտի պայմանները, ուրեմն եւ՝ ժամանակները:

Միւս գործօնը, որ դարձեալ սահմանափակում է դնում աստղերով ժամանակ որոշելու հնարաւորութեան վրայ, աստղերի «սեփական շարժում»ներն են: Բանն այն է, որ «անշարժ» համարուող աստղերը շատ դանդաղ փոխում են իրենց դիրքը երկնակամարի վրայ ի հետեւանք այն բանի, որ դրանք բնաւ էլ անշարժ չեն, այլ իւրաքանչիւրն ունի իր ուրոյն շարժումը երկնքում, որ, կախուած աստղի հեռաւորութիւնից, մեզ երեւում է մեծ կամ փոքր: Բնականաբար, այդ շարժումները աւելի զգալի կ'երեւան համեմատաբար մօտիկ աստղերի պարագայում: Միւս կողմից էլ, աստղերով ժամանակ չափելիս, յարմար է դիտել հիմնականում պայծառ աստղերը: Խսկ պայծառ աստղերն էլ մեծ մասսամբ համեմատաբար մեզ մօտիկ աստղերն են: Ահա սա էլ բերում է նրան, որ պատմականօրէն ժամանակաշափութեան համար ընտրուած «անշարժ» աստղերի մեծ մասը բնաւ էլ անշարժ չեն եւ հազարամեակների ընթացքում զգալի չափերով փոխում են իրենց դիրքը երկնքում: Արդ, եթէ երկրի պտտման առանցքի գալարապտոյտի հետեւանքով աստղերի դիրքերի փոփոխութիւնը կատարուում է որոշակի ուղղութեամբ եւ լիովին հաշուարկելի է, եւ հնարաւոր է ճշգրիտ որոշել, թէ ո՞ր աստղը ի՞նչ դիրք կ'ունենայ մեզ հետաքրքրող կամայական դարաշրջանում, ապա աստղերի սեփական շարժումներով պայմանաւորուած՝ նրանց դիրքի փոփոխութիւնները տարբեր աստղերի պարագայում տեղի են ունենում տարբեր ուղղութիւններով եւ բրանք հաշուարկելի լինելու համար կարիք ունեն շատ բարձր ճշգրտութեան չափումների: Այսպիսի չափումներ սկսել են հնարաւոր դառնալ միայն ի. դարի կէսերից եւ յատկապէս՝ ի. դարի վերջերին, երբ հնարաւոր դարձաւ այդպիսի չափումներ կատարել արբանեակների միջոցով, եւ բաւական յուսալի որոշել համեմատաբար մօտիկ աստղերի սեփական շարժումների արժեքները: Բնականաբար, հնում որեւէ աստղի նպատակայարմարութիւնը՝ դրա դիտումներով ժամանակ որոշելու համար, կարող էր որոշուել նախ եւ առաջ փորձի միջոցով:

Թէ ինչքան կարող է տեւել տուեալ աստղով որոշուած օրուայ նաեւ՝ տարեմուտի օրուայ) դիրքի կայունութիւնը, կախուած է դիտման վայրից, ընտրուած աստղից ու դարաշրջանից: Նոյնը վերաբերում է նաեւ աստղի դիտումով որոշուած տարուայ տեւողութեան

դի մօտ: (Ի դէպ, հիւսիսային բնեւոը նոյն Վեգա աստղի մօտ կը լինի դարձեալ 13000 տարի յետոյ):

Հաստատուն լինելուն: Օրինակ, յայտնի է, որ բացառիկ յաջող զուգադիպութեամբ՝ Եգիպտոսի մայրաքաղաք Մեմֆիսից Շնաստղի դիտումով որոշուած տարուայ տեւողութիւնը շատ կայուն է եղել (365,25 օր) չուրջ չորս հազար տարուայ ընթացքում⁶⁴: Սակայն հաշուարկը ցոյց է տալիս, որ այդ նոյն աստղով որոշուած տարին բոլորովին այլ տեւողութիւն կ'ունենար եւ շատ աւելի կարճ կը տեսէր դրա կայունութիւնը, եթէ դիտումներն արուէին այլ տեղ, ասենք՝ Հայաստանում: Ի դէպ, Եգիպտոսից Շնաստղով որոշուած «կայուն» օրն էլ հէնց այդ նոյն հազարամեակների ընթացքում դանդաղ սահելով տեղափոխուել է իր նախնական դիրքից՝ մօտ 128 տարում մէկ օրով: Կայուն է եղել ոչ թէ դրանով որոշուած օրուայ դիրքը, այլ դրանով որոշուած տարուայ տեւողութիւնը: Այսինքն, եթէ հին Եգիպտացիները խնդիր դրած լինէին տարուայ մէջ մի խիստ կայուն օր ունենալու, ապա այդ խնդրի համար Շնաստղի դիտումները կարող էին յարմար լինել ոչ աւելի քան մի քանի ({բրկու-երեք}) հարիւր տարի:

Բնականաբար, սա վերաբերում է նաև Հայկական օրացոյցներին: Մենք այլ առիթով տեսել ենք, որ Հայոց Հայկեան օրացոյցում, թէպէտ Նաւասարդի I ամսաթուին կապուած տարեմուտը եղել է շարժական (1506 տարում մէկ պտոյտ է կատարել տարուայ եղանակներով), դրան գուգահեռ եղել է նաև Հայկի աստղի արեգակնային ամբարձումը դիտելով գլխաւոր տօնի՝ Նաւասարդեան մեծ տօնակատարութեան օրը որոշելու կարգ: Այս օրացոյցում ամէն տարի գլխաւոր տօնի օրը գտնելու համար դիտել են Հայկի աստղի առաջին առաօտեան ծագումը: Եւ այս կարգն էլ աւանդաբար մնացել է դրան նախորդած Նախահայկեան օրացոյցից, ուր այդ նոյն աստղի դիտումով որոշուել է հէնց Ամանորի տօնի օրը: Հայկեան օրացոյցի սկզբնաւորման ժամանակ (ն.թ. 2341) Հայկի աստղի արեգակնային ամբարձումը Հայաստանից դիտուել է ամառնամուտից ութ օր առաջ: Եւ դա էլ շատ նպաստաւոր է եղել՝ այդ օրը Նաւասարդեան տօներն սկսելու առումով: Բնականաբար, ժամանակի ընթացքում այս իրավիճակը պիտի փոփոխուէր: Ըստ կատարուած հաշուարկի՝ Հայկի գլխաւոր աստղով որոշուած աստեղային օրացոյցը մէկ օրուայ սխալ պիտի գոյացնէր 107 տարում⁶⁵: Ինչպէս երեւում է վերը բերուած թուերից, իր սխալի չափով սա քիչ է տարբերուած Շնաստղի դիտումով Եգիպտոսից որոշուած «կայուն» օրուայ սխալից:

64 КЛИМИШИН, И. А., Календарь и хронология, “Наука”, Москва 1985, 147.

65 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Օրացոյց Հայոց, 167:

Այսինքն, ակնյայտ է, որ աստղի դիտումով կայուն օր որոշելու պարագայում այդ օրուայ կայունութիւնը (արեւադարձային տարուայ մէջ) պիտի լինէր բաւական սահմանափակ թէ՛ ճշտութեան, եւ թէ՛ կիրառելիութեան ժամանակամիջոցի առումով։ Ուրեմն, եթէ օրացոյցի կիրառութեան տեւողութիւնը աւելի մեծ լինի աստղի դիտումով կայուն օր որոշելու համար թոյլատրելի հնարաւոր ժամանակամիջոցից, ապա բնական է, որ պէտք է այդ օրացոյցում ինչ-որ ժամանակ տեղի ունենայ կամ կիրառուող աստղի փոխարինում մի այլ աստղով (կամ կիրառուող աստղերի փոխարինում այլ աստղերով), եւ կամ աստղի դիտումով որոշուող օրուայ փոփիխում։ Օրինակ, հին Եգիպտական օրացոյցի պարագայում անփոփին է թողնուել դիտուող աստղը եւ դանդաղ փոփիխուել է այդ աստղով որոշուող օրը։ Այսինքն, Եգիպտական օրացոյցում խնդիր է եղել ոչ թէ կայուն օրուայ ճշգրիտ պահպանումը, այլ ընտրուած աստղի տարին անփոփին պահելը։ Պարզ է նաեւ, որ եթէ օրացոյցում խնդիր դրուած լինէր տարուայ մէջ ընտրուած կայուն օրը անփոփին պահելու, ապա անպայման պիտի ինչ-որ ժամանակ դիտման համար ընտրուած աստղը փոխարինուել այլ աստղով։ Թէ ի՞նչ կերպ է հնարաւոր պատկերացնել դիտման համար ընտրուած աստղի փոխարինումը, այժմ դժուար է յստակ ասել։ Հնարաւոր է սահուն անցում, հնարաւոր է եւ կտրուկ անցում։ Ամէն պարագայում, պարզ է, որ «Երկարակեաց» օրացոյցի պարագայում աստղով որոշուած օրուայ դանդաղ փոփիխութիւնը կամ դիտման համար կիրառուող աստղի փոխարինումը այլ աստղով անխուսափելի է։ Արդ, հարկ է ճշտել, թէ Նախահայկեան օրացոյցի պարագայում այս երկու փոփիխութիւններից ո՞ր մէկը տեղի ունի։

Այս հարցի պատասխանը գտնելու համար յիշենք, որ Հայկեան եւ Նախահայկեան օրացոյցներում եղել է տարեկան գլխաւոր տօնը՝ Նաւասարդը ամառնամուտից մօտ մէկ շաբաթ առաջ նշելու հանգամանք եւ այդ տօնն էլ թէ՛ իր ամսաթուով, եւ թէ՛ իր ծէսերով ու խորհուրդներով շատ սերտ կապուած է եղել աշնանացան ցորենի հասունացման, բերքահաւաքի եւ առաջին բերքի ընծայման հետ։ Փաստորէն, Հայոց հնագոյն գլխաւոր տօնը ամէն ինչից զատ եղել է նախ եւ առաջ աշնանացան ցորենի (գարու) առաջին բերքի ընծայման տօն։ Սա նշանակում է, որ այդ տօնի օրը (ընդհանրապէս՝ ժամանակը) դարերի ընթացքում չէր կարող փոխուել դա պիտի մնար բաւական կայուն այն պարզ պատճառով, որ միեւնոյն երկրում, միեւնոյն եղանակին պայմաններում աշնանացան ցորենի հասունացման ժամանակը չէր կարող էապէս փոփոխուել նոյնիսկ հազարամեակների ընթաց-

քում. դա կախուած է միայն տուեալ երկրի եղանակային պայմաններից եւ ընտրուած մշակաբոյսից: Եւ, քանի որ թէ՛ երկիրը, եւ թէ՛ ընտրուած բոյսը չեն փոխուել, ուրեմն, չպիտի փոխուէր նաեւ այդ մշակաբոյսի հասունացման ժամանակը: Սա էլ, իր հերթին, նշանակում է, որ օրացոյցի կարգաւորիչ աստղը պիտի ընտրուած լինէր այնպէս, որ նրա առաջին ծագումը ցոյց տար հէնց աշնանացան ցորենի հասունացման ժամանակը, կամ դրան նուիրուած տօնի սկիզբը: Այստեղից էլ հետեւում է, որ Նախահայկեան օրացոյցում դարերի ընթացքում պիտի անպայման կատարուէր ոչ թէ աստղի դիտումով որոշուող օրուայ դանդաղ փոփոխութիւն, այլ դիտման համար ընտրուած աստղի փոխարինում մի այլ աստղով:

Նախահայկեան օրացոյցի մասին գիտենք, որ դրա կիրառութիւնը պաշտօնապէս դադարել է ն.թ. 2341ին: Միաժամանակ ունենք նաեւ, որ Քեթիից գտնուած բրոնզիդարեան խեցանօթի զարդապատկերների հիման վրայ վերականգնուած օրացոյցը սկզբունքօրէն համընկնում է հէնց Նախահայկեան օրացոյցին: Իսկ այդ քրեղանն էլ հնագիտական միջոցներով թուագրուած է ն.թ. 32րդ դարով: Ուրեմն, Նախահայկեան օրացոյցը գործնականօրէն կիրառուել է գոնէ ն.թ. 32րդ դարում: Այսինքն, ունենք առնուազն 800 տարուայ կիրառութիւն: Աւելին. ունենք նաեւ, որ Հայկեան օրացոյցի կիրառութեան ընթացքում էլ կիրառուել է Հայկի աստղի դիտումներով գլխաւոր տօնի օրը որոշելու կարգը: Սա էլ մեր աստղի դիտումների կիրառման տեւողութիւնը երկարեցնում է եւս գոնէ 2500 տարով: Ստանում ենք 3000–3500 տարուայ միջակայք, որի ընթացքում Հայաստանում պիտի կիրառուած լինի Հայկի աստղի դիտումներով կայուն օր որոշելու կարգը: Սա, իրօք, շատ մեծ միջակայք է նման կիրառութեան համար: Մատների վրայ հաշուելով անգամ կը տեսնենք, որ այս ընթացքում Հայկի աստղի դիտումով որոշուած «կայուն» օրը պիտի տեղաշարժուէր մէկ ամսից աւելի ($3500 / 107 = 32.7$ օր): Ուստի, բնական է ընդունել, որ գոնէ այս միջակայքի ծայրակէտերին մօտ պիտի լինէր կիրառուող աստղի փոխարինում: Բնականաբար, մեզ հետաքրքրում է այդ ծայրակէտերից նա, որ մօտ է օրացոյցի ծնունդին, այսինքն՝ առաւել հինը: Ուրեմն, կարող ենք եզրակացնել, որ ըստ մեր ստացած որակական գնահատականի, հէնց մեր խնդրոյ առարկայ քրեղանի ստեղծման ժամանակից ոչ շատ առաջ (ասենք՝ երկու-երեք դարից ոչ աւելի) պիտի փոխուած լինէր օրացոյցի կարգաւորման համար կիրառուող աստղը:

Արդ, հարկ է պարզել. իսկ ո՞ր աստղը (համաստեղութիւնը) կարող էր եղած լինել Հայոց գլխաւոր տօնի օրը ցուցանող լուսատուն Հայկի աստղի կիրառութիւնից առաջ:

Նախ նկատենք, որ այս հարցի համար մենք չունենք ուղղակի վկայութիւն այնպէս, ինչպէս Հայկի աստղի պարագայում էր (մեզ հասել էին ազգագրական, պատմագրական ու բանահիւսական ուղղակի վկայութիւններ, որ վկայում էին Հայկի աստղի ունեցած յատուկ գերը Հայոց օրացոյցի համար): Այսինքն, Նախահայկեան օրացոյցի սկզբնաւորման ժամանակ այդ օրացոյցի գլխաւոր տօնի օրը ցուցանող աստղը մենք պիտի փորձենք գտնել կողմնակի, անուղղակի միջոցներով:

Հարցիս պատասխանը գտնելու համար փորձենք հասկանալ, թէ ի՞նչ կերպար պիտի մարմնաւորի այս տօնի օրը ցուցանող աստղը կամ համաստեղութիւնը: Եւ սա պարզելու համար էլ նայենք, թէ իբրև ի՞նչ էին ընտրուած Հայկն համաստեղութիւնն ու դրա գլխաւոր աստղը Հայոց գլխաւոր տօնի օրը գտնելու համար: Հասկանալի է, որ այս հարցում շատ կարեւոր պիտի լինէր աստղի ծագման օրը տօնի օրուայ հետ ներդաշնակելը: Սակայն այս պարտադիր ներդաշնակութիւնից զատ չէր կարող ի նկատի չառնուել նաեւ համաստեղութեան մարմնաւորած կերպարի բովանդակութիւնը, իմաստը: Հայկը, ինչպէս բազմիցս նշուել է, երկնային կերպարն է եղել Հայր աստուծոյ, դիցարանի գլխաւոր պաշտոնի հակի: Դրա հետ զուգահեռ նա ունեցել է նաեւ այլ դիցաբանական «գործառոյթներ»: Սակայն հիմնականը նրա Հայր, Արարիչ, գլխաւոր աստուած լինելն է: Այսինքն, ունենք, որ մի տեւական ժամանակահատուած Հայոց գլխաւոր տօնի օրը ցոյց տուող լուսատուն եղել է երկնքում շողացող Հայր աստուծը:

Իսկ ի՞նչ կերպար կարող էր մարմնաւորել դրան նախորդած ժամանակում այս նոյն տօնի օրը ցոյց տուող լուսատուն: Գմոռանանք, որ այդ կերպարը պիտի ներդաշնակէր նաեւ նաւասարդեան տօնի հիմնական ծէսին՝ նորահաս հացի բերքի ընծայմանը: Ակնյայտ է, որ դա պիտի լինէր իր կարեւորութեամբ, իր առաջնայնութեամբ ու զօրութեամբ Հայր աստծուն չզիջող (կամ համարեա չզիջող) մի կերպար: Նկատի ունենալով հին ժամանակներում իշխանութեան փոխանցման ներընտանեկան բնոյթը, բնական է ընդունել, որ այդպիսի կերպարներ կարող են լինել միայն մի քանիսը. կամ այդ նոյն պիսի կերպարներ կարող են լինել միայն մի քանիսը. կամ այդ նոյն Հայր աստուծոյ որդին, կամ նրա դուստրը, կամ նրա մայրը եւ կամ կողակիցը՝ կինը: Նրա հօր կերպարը լինելը շատ քիչ հաւանական է, քանզի, եթէ ունենք Հայր աստուած, ապա նրանից առաջ, բնականա-

բար, այլ «հայր» ենթադրելը խնդրայարոյց է⁶⁶: Եղբօր կերպարը եւս հաւանական չէ, քանի որ դա կը նշանակի իշխանութեան անցում այլ ընտանիքի (թէպէտ՝ նոյն նախնական ընտանիքի մէկ այլ ճիւղին): Նման անցում ենթադրելու որեւէ հիմք, կամ պատճառ մենք չունենք, ուստի պատարքերակը այստեղ չենք քննարկի: Որդու կերպարն էլ մեր խնդրի համար մերժելի է, քանի որ որդին, որպէս կանոն, կարող է միայն յաջորդել հօրը, բայց ոչ երբեք նախորդել: Այսպէս բացառելով հօր, եղբօր ու որդու (արական) կերպարները իբրեւ Հայր աստուծոյ հնարաւոր նախորդ, ստանում ենք, որ ամենահաւանականը այն է, որ իբրեւ նրան նախորդող հանդէս եկած լինի ոչ թէ արական, այլ իդական մի կերպար: Հնարաւոր իդական կերպարները երեքն են՝ կինը, մայրը եւ քոյրը: Հաշուի առնելով հնագոյն ընտանեկան դրուածքում մերձամուսութեան առկայութիւնը (եւ նոյնիսկ՝ դրա կրօնախորհրդաբանական իմաստաւորումը), հնարաւոր է այս երեք իդական կերպարների մէկտեղում մէկ անձի մէջ: Այսինքն, հնարաւոր է պատկերացնել, որ Հայր աստուծոյ կողակիցը՝ նրա կինը լինէր նաեւ նրա քոյրը եւ նաեւ զուստը (չի բացառում նաեւ՝ մայրը)⁶⁷: Այսպիսի փոխարինումը առաւել հաւանական կը գիտուի, եթէ նկատի առնենք նաեւ այն, որ հնագոյն դիցարաններում գլխաւոր պաշտուող էակների կերպարները մեծ մասամբ եղել են փակի տակ. նրանց տեսնելը կամ նրանց հետ ուղղակի առնչուելը համարուել է «կեանքի համար վտանգաւոր»: Յիշենք յունական դիցարանում Զեւսին, որին իր իսկական կերպարանքով տեսնելը մահկանացուների համար անհնարիշը եւ ուղղակի մահացու էր (այդպէս գոհուեց Դիոնիսոսի մայրը՝ մահկանացու Սեմելէն⁶⁸): Աչա այս առումով լիովին բնական կարելի

66 Այստեղ հնարաւոր չէ ենթադրել այնպիսի իրավիճակ, ինչպէս ունենք, օրինակ, յունական դիցարանութեան մէջ, ուր Զեւսից առաջ իշխանութիւնը պատկանել է նրա հօրը՝ Քրոնոսին, որ, ըստ էութեան, ժամանակի դիցական կերպարումն է: Մեր պարագայում Հայկը ինքը ունի նաև ժամանակի աստուծոյ գործառոյթներ. նրա զաւակները տարուայ ամիսներն են: Այս առումով Հայկը նաև յունական Քրոնոսի գործառոյթն ունի, եւ, ըստ այդմ, Հայկից առաջ այլ ժամանակային աստուծ ենթադրելու հիմք մենք չունենք: (Ի դէպ, սա նաև ցուցանում է, որ Հայկի կերպարը, իբրեւ չորոհուած, միասնական կերպար աւելի նախնական ու հին է, քան Զեւս-Քրոնոս զոյգը):

67 Այս կապակցութեամբ յիշենք Հայոց Արամագդի եւ Անահիտի առնչութիւնը: Մի դէպում Անահիտը Արամագդի դուստրն է, մի այլ դէպում նրա կողակիցը: Այսինքն, այս պարագայում ունենք դասեր եւ կողակցի նոյնացում: Յունական էդիակի պարագայում էլ ունենք մօր ու կողակցի եւ քրոց ու դասեր նոյնացում: Զեւսի ու Հերայի պարագայում մէկտեղուած են քոյրն ու կինը:

68 Միֆы народов мира, т. 2, 425.

Է նկատել, որ նախնական շրջանում Հայր աստծուն կարող էր փոխարինել նրա կողակիցը (գուցէ՝ իբրեւ նրա ներկայացուցիչ, կամ իբրեւ միջնորդ՝ մարդկանց եւ Հայր աստուծոյ միջեւ, կամ իբրեւ մարդկանց համար բարեխօս իր ամենազօր ամուսնու առաջ): Սրան զուգահեռ կարող ենք յիշել Աստուածածնի կերպարը քրիստոնէութեան մէջ: Թէպէտ այստեղ պաշտում է Ս. Երրորդութիւնը՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին, սակայն առանցքային դեր ունի Աստուածածինը, որպէս հիմնական միջնորդ, հիմնական բարեխօս Հօր եւ Որդու առաջ: Հստ այսմ ստանում ենք, որ Հայր աստուծոյ (Հայկի) կերպարը մարմնաւորող աստղից առաջ պիտի օրացոյցի առաջնորդութիւնը իրականացնէր նրա կողակցի կերպարը մարմնաւորող աստղը: Իսկ ո՞ր համաստեղութիւնը (աստղը) կարող էր գա լինել: Աստղալից երկնքում մեզ յայտնի հին ու նոր համաստեղութիւնների մէջ այս դերի համար լաւագոյն (մինչեւ իսկ՝ միակ) թեկնածուն Կոյս կենդանակերպն է իր պայծառ գլխաւոր աստղով, որ կոչւում է Սպիկա: Այս համաստեղութիւնը մի կողմից պատկերում է Կոյս կնոջ կերպար, որ լիովին ներդաշնակ է գլխաւոր աստծու կողակցի կերպարին (յիշենք Զեւսի կնոջը՝ Զերային, որ ամէն տարի վերականգնում էր իր կուսութիւնը՝ Կանաթոս (Կանա) աղբիւրում (առուակում) լողանալով, այսինքն՝ միշտ Կոյս էր), միւս կողմից էլ ձեռքին ունի հացաբոյսի հասկ կամ հասկերի խուրձ, որ յատակ ցուցանում է հացի ընծայում կատարելու նրա գործառոյթը: Այսինքն, սա երկնային կերպարների մէջ միակն է, որ բաւարարում է մեր խնդրի պահանջներին: Այսու, կը ստանանք, որ Հայկի աստղից առաջ պիտի Նախահայկեան օրացոյցի առաջնորդ, ուղեցոյց աստղ լինէր Կոյսի աստղը՝ Սպիկան, որ է Կոյսի ձեռքին բռնած Հասկը (կամ հասկերի խուրձը):

Օրացոյցի կարգաւորիչ աստղի այսպիսի փոխարինումը առաւել բնական ու հասկանալի լինելու համար հարկ է պատասխանել նաև այն հարցին, թէ ի՞նչ իմաստային, բովանդակային, խորհրդաբանական կապ կայ օրացուցային միեւնոյն խնդիրը լուծելու համար յաջորդաբար կիրառուած մեր երկու համաստեղութիւնների՝ Կոյսի եւ Հայկի միջեւ: Այս հարցի պատասխանն ունենալու համար վերստին յիշենք, որ Հայկն համաստեղութեան կենարոնում մի գծի վերստին յիշենք, որ Հայկն համաստեղութեան կապւում է Կոյսի կենդանակերպի հետ:

Ինչպէս վերը տեսանք, երկնային Կոյսին վերագրուել է նաև մարդկանց լաւ ու փառ գործերը կշռելու գործառոյթ, որին ծառայել

է կենդանաշրջանում արեւելքից Կոյսին կից Կշիռ համաստեղութիւնը⁶⁹: Այսինքն, երկնային Կոյսը ամէն ինչից զատ նաեւ կշռող է: Եւ սրան զուգահեռ էլ ունենք, որ Հայկի կենտրոնական աստղերը կոչուել են «Զափ ու Կշիռ»: Այսինքն, գործառութային առումով Հայկն ու Կոյսը այս մի կէտում նոյնանում են: Ընդ որում, Հայկի պարագայում պահպանուած «Զափ ու Կշիռ» անունը իր կառուցուածքով առաւել մեծ հնութիւն է ենթադրում, քան պարզ «Կշիռ» անունը: Յիշենք, որ հացահատիկի մշակութեան վերջում պատրաստի արտադրանքը պահեստաւորելուց առաջ պարտադիր չափուել է: Ընդ որում, չափելու երկու հնարաւոր ձեւերից առաջինը եւ նախնականը ըստ ծաւալի չափելն է, որ բնաւ հնարաւոր չէ «կշռել» անուանել: Ծաւալ չափելը շատ աւելի պարզ ու մատչելի գործողութիւն է, քան կշիռ կամ զանգուած չափելը: Ըստ այսմ բնական է, որ կշեռքը, իբրեւ գործիք պիտի ի յայտ եկած լինի էապէս աւելի ուշ, քան ծաւալը չափելու պարզ գործիքները (տարբեր տեսակի ամաններ, կոտ եւ այլն): Այս հիմքի վրայ հասկանալի է, որ համաստեղութեան «Զափ ու Կշիռ» անունը իր մէջ պարունակում է առաւել հին ու նախնական ժամանակների հետքը: Նաեւ հասկանալի է, որ Հայկը, իբրեւ գլխաւոր աստուած, պիտի ունենար դատելու, ըստ այդմ նաեւ՝ կշռելու գործառոյթ: Եւ իբրեւ հացի բերքի ընծան ընդունող նա պիտի նաեւ չափեր (ապա նաեւ՝ կշռէր) իրեն տրուած ընծան (գոհաբերութիւնը): Յիշենք սրա զուգահեռը Ծննդոց գրքում, ուր Աստուած տարբերութիւն դրաւ Աբէլի ու Կայէնի ընծաների միջեւ ու նախընտրեց Աբէլի տրուած պատարագը⁷⁰: Տարբերութիւն դնել, նշանակում է ըստ էռթեան չափել (կշռել), որ յետոյ հնարաւոր լինի դրանք համեմատել եւ ի վերջոյ՝ տարբերակել: Այսինքն, ե՛լ Հայկի «Զափ ու Կշիռ» անուան աւելի նախնական լինելը, ե՛լ էլ նրա Հայր աստուած լինելը ցոյց են տալիս, որ չափելը (ապա նաեւ՝ կշռելը) պիտի նախապէս եղած լինի հէնց նրա՝ գործառոյթը: Իսկ Կոյսի կողմից դրա կատարումը այս պարագայում պիտի նշանակի միայն, որ այդ գործառոյթը առժամանակ դրուած է եղել նրա կողակցի վրայ՝ իբրեւ ինչ-որ առումով նրան փոխարինող, նրան օժանդակող: Հնարաւոր է այս նոյն գործառոյթի երկու կերպարների կողմից կատարուելու տեսնել նախապէս երկու կերպարների կողմից կատարուելու տեսնել նախապէս շափելը (ապա եւ՝ կշռելը) երկուսով՝ երկու հոգով միասին կատարելու իրողութեան արձագանքը: Այսինքն, չափելու գործողութիւնը նախապէս կատարուելիս է եղել երկու հոգով (ամենայն հաւանականապէս կատարուելիս է եղել երկու հոգով)

69 OLCOTT, W. T., *Star lore: myths, legends and facts*, 382.

70 ԾԱ Դ, 2-5:

նութեամբ՝ միաժամանակ իգական ու արական կերպարների կողմից): Յետագյում որոշ ժամանակ դա վերագրուել է միայն իգական, որոշ ժամանակ էլ միայն արական կերպարների:

Ահա այս կերպ մենք ստանում ենք ընդունելի տրամաբանական բացարութիւն այն իրողութեան, որ Նախահայկեան օրացոյցի կարգաւորող առաջնորդ աստղը նախապէս եղել է Կոյս Համաստեղութեան գլխաւոր աստղը, եւ դրանից յետոյ այդ նոյն դերով Հանդէս է եկել Հայկն Համաստեղութեան գլխաւոր աստղը⁷¹:

Օրացոյցի կարգաւորող աստղի (համաստեղութեան) եւ դրան համապատասխանող կերպարի այսպիսի փոխարինումը իր յստակ զուգահեռն ունի նաեւ հայկական զարդարուեստի մէջ։ Այսպէս հայկական ձեռագրային մանրանկարչութեան, միջնադարեան բանաստեղծական արուեստի ու ժողովրդական բանահիւսութեան նմոյշների համակողմանի քննութիւնը ցոյց է տալիս, որ Հայոց դիցաբանական, խորհրդաբանական պատկերացումների մէջ կոյսը հանդէս է գալիս իբրեւ դիցաբանական եղջերուին փոխարինող կերպար⁷²։ Ըստ Ա. Մնացականեանի համակողմանի քննութեան, հայկական զարդարուեստի, միջնադարեան բանաստեղծութեան ու բանահիւսութեան բազմաթիւ օրինակներ յստակ վկայում են, որ Կոյսը (Աստուածամայրը, Աստուածածինը) ժամանակի ընթացքում փոխարինել է դիցաբանական եղջերուով արտայայտուած նախնական կերպարին։ Միւս կողմից էլ մենք գիտենք, որ դիցաբանական եղջերուն կենդանական արտայայտութիւնը, կենդանական զուգահեռն ու կրկնակն է եղել Հայկի-Հայր աստուծոյ։ Սրա արտայայտութիւնն է նաեւ այն, որ, օրինակ, հնդկական մշակոյթում Հայկն-Օրիոն համաստեղութիւնը

71 Անշուշտ, այստեղից բնաւ չի հետեւում, թէ Նախահայկեան օրացոյցի կարգաւորման խնդրում անցումը Կոյսի աստղից Հայկի աստղին պիտի եղած լինի անմիջականօրէն, առանց միջանկեալ այլ աստղ(եր)ի օգտագործման: Աւելին. հնարաւոր է, որ Կոյսի աստղի կիրառութիւնից յետոյ մինչեւ Հայկի աստղի դիտումներին անցնելը ինչ-ոք ժամանակ կիրառուած լինեն նաև այլ աստղերի դիտումները: Այսպիսի հնարաւորութիւնը առաւել հաւանական կը նկատուի, եթէ յիշենք, որ երկնային քարտզի վրայ կան Հայկին (Orion) շատ առումներով մօտիկ եւ նոյնիսկ՝ կրկնող կերպարներ. սրանք բոլորն ել առումներով մօտիկ եւ նոյնիսկ՝ կրկնող կերպարներ. սրանք բոլորն ել կարող են լինել միջանկեալ տարրերակների թեկնածուները: Այս միջանկեալ կարող են լինել միջանկեալ տարրերակների թեկնածուները: Այս միջանկեալ վիճակների հնարաւոր առկայութեան հարցը առանձին հետազոտութեան խնդիր է, որ առայժմ դուրս է մեր ծրագրերից ու հնարաւորութիւններից:

72 ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ, Ս., Դիցարանական եղբերուն միջնադարեան հայ պրուեստում, Բանքը Մատենադարանի, 12, 1977, էջ 7-49:

կոչուել է Praja-pati եւ ընկալուել է իբրև Եղջերու, որին խոցել է Mrigvayadha-«Եղջերու սպանող»ը կամ Lubdhaka-«Որսորդ»ը ու Հայկի գոտու երեք միաշար աստղերն էլ (նոյն Զափ ու Կշիռը, կամ Շամփուրը) համարուել են այդ Եղջերուի մարմնի մէջ միշրճուած եռածայր (Եռասլաք) նետը: Մեծ Շուն համաստեղութիւնն էլ համարուել է հէնց Եղջերուին սպանող Որսորդը⁷³: Այսինքն, մի կողմից ունենք, որ նոյնական, իրար փոխարինող են Կոյսի եւ Եղջերուի կերպարները, միւս կողմից էլ այդ Եղջերուն նոյնացած է Հայկի-Հայր աստուծոյ հետ: Սա էլ նշանակում է, որ ստանում ենք անմիջական անցում Հայկի կերպարից Կոյսին եւ հակառակը: Այսինքն՝ Հայկն ու Կոյսը իրար փոխարինող կերպարներ են: Սա էլ հէնց այն է, ինչ մենք ուզում էինք հիմնաւորել:

Այսպիսով, ստանում ենք, որ Նախահայկեան օրացոյցում Հայկի աստղից առաջ ուղեցոյց, առաջնորդ աստղի դեր կատարել է Կոյս կենդանակերպի գլխաւոր աստղը, որ կերպարուումն է երկնային Կոյսի ձեռքին բռնած հացաբոյսի Հասկի, եւ հէնց այդպէս էլ կոչուել է (Հասկ-Տրիկա): Մնում է ստուգել եւ տեսնել, թէ որքանո՞վ է դա հնարաւոր, եւ ի՞նչ կը տայ այդ աստղի դիտումներով օրացոյցը կարգաւորելու հանգամանքը այդ օրացոյցի կիրառութեան ժամանակի մասին:

Նախքան առաջ անցնելը քննենք մի երկու իրողութիւն: Ժամանակին Հայկեան օրացոյցի սկիզբը գտնելու համար հաշուարկուել էր Հայկի աստղի ծագման ժամանակը տարբեր դարաշրջանների համար, ապա օրացուցային ետհաշուարկի միջոցով գտնուել էր, թէ ե՛րբ կարող էր տեղի ունենալ օրացուցային տարուայ սկզբի եւ այդ աստղի առաջին առաւոտեան ծագման (արեգակնային ամբարձման) զուգադիպումը: Այդ զուգադիպման օրն ու թուականն էլ ընդունուել էին իբրեւ Հայկեան օրացոյցի սկիզբ (եւ Նախահայկեան օրացոյցի աւարտ): Այժմ մեր խնդրի համար այս մօտեցումը կիրառելի չի կարող լինել: Բանն այն է, որ Նախահայկեան օրացոյցում ամիսների եւ օրերի անընդհատ յաջորդականութեան մասին մենք ոչինչ չգիտենք, եւ ոչ մի հիմք չունենք ամիսների անընդհատ յաջորդականութիւն ենթադրելու: Սա էլ նշանակում է, որ օրացուցային ետհաշուարկ կադարելու:

73 Այս մասին տե՛ս ALLEN, R. H., *Star names, their lore and meaning*, 309, նաև՝ ԲՐՈՒԻՏԵԱՆ, Գ., *Օրացոյց Հայոց*, 184-185: Ի դեպ, հին Միջագետքնեան երկարաժաման համակարգում Մեծ Շուն համաստեղութեան տեղում պարզապէս նետ ու աղեղ է (տե՛ս VAN DER WARDEN, B. L., *Babylonian astronomy. II. The Thirty-six stars*, Journal of Near Eastern Studies, vol. 8, 1949, 6-26):

տարել եւս մենք չենք կարող: Ուստի Նախահայկեան օրացոյցի սկիզբը գտնելու համար հարկ է հիմնուել բոլորովին այլ դատողութիւնների վրայ: Հարկ է ունենալ այլ ելակէտային դրոյթներ: Ի՞նչ փաստեր, ի՞նչ դրոյթներ կարող ենք կիրառել իբրեւ ելակէտ այս խնդրի համար:

Առաջին հանդամանքը, որի վրայ կարող ենք հիմնուել հետեւեալն է: Մենք ունինք, որ թէ՛ Հայկեան եւ թէ՛ Նախահայկեան օրացոյցներում եղել է տարեկան գլխաւոր տօնը՝ Նաւասարդը ամառնամուտից մօտ մէկ շաբաթ առաջ նշելու հանդամանք եւ այդ տօնն էլ թէ՛ իր ամսաթուով, եւ թէ՛ իր ծէսերով ու խորհուրդներով շատ սերտ կապուած է եղել աշնանացան ցորենի հասունացման, բերքահաւաքի եւ առաջին բերքի ընծայման հետ: Այսինքն, Նաւասարդեան տօնը եղել է նախ եւ առաջ աշնանացան ցորենի (գարու) առաջին բերքի ընծայման տօն: Եւ այստեղից էլ հետեւում է, որ այդ տօնի օրը դարերի ընթացքում չէր կարող փոխուել. դա պիտի մնար բաւական կայուն եւ միշտ համապատասխանէր աշնանացան ցորենի հասունացման ժամանակին, որ Հայաստանի պայմաններում լինում է ամառնամուտից մօտ 8 օր առաջ: Այս դատողութեամբ կարող ենք պահանջել, որ մեր խնդրոյ առարկայ օրացոյցի սկզբնաւորման շրջանում ընտրուած աստղի ծագումը լինէր հէնց մեզ յայտնի Նաւասարդեան տօնահանդէսի սկիզբը: Ի դէպ, այս պարագայում հասկանալի կը դառնայ նաեւ կոյս կենդանակերպի գլխաւոր աստղը իբրեւ հասկ ներկայացուած լինելը եւ այդպէս կոչուելը:

Տակաւին Հայկեան օրացոյցի սկիզբը գտնելու ժամանակ տեսել էինք, որ հին Հայոց գլխաւոր տօնը՝ Նաւասարդը տօնուել է ամառնամուտից 8 օր առաջ: Տօնի այսպիսի դիրքի հետ մէկտեղ գտնուել էր նաեւ այդ օրացոյցի սկզբնաւորման տարին՝ ն.թ. 2341: Այս թուականի իսկութիւնն էլ, իր հերթին, հիմնաւորուել էր միջագետքեան սեպագիր աղբիւրների տուեալների հետ համադրութեամբ⁷⁴: Սրա հետ մէկտեղ տօնիս համար ստացուած ժամանակն էլ բաւարար չափով հիմնաւորուել էր ազգագրական, բանահիւսական եւ այլ տուեալներով⁷⁵: Այսինքն, թէ՛ այս թուականը, եւ թէ՛ դրա հետ շաղկապուած տօնի օրը լաւ հիմնաւորուած են: Արդ, սրան զուգադրելով Հայկի աստղից առաջ գլխաւոր տօնի օրը կոյսի աստղով որոշուած լինելու

74 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Հայոց սովմարի որոշ հարցերի մասին. Հայոց Բուն օրացոյցի սկիզբն ու պատմական փաստերը, ի էջմիածին, 1997, Բ-Գ, 144-155:

75 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Հայոց սովմարի որոշ հարցերի մասին. Հիմ Հայոց գլխաւոր տօնը, ի էջմիածին, 1995, Ժ.-Ժ.Բ., 130-153:

մասին վերի քննութեամբ մեր ստացածը, կ'ունենանք, որ Նախահայկեան օրացոյցի սկիզբը գտնելու համար հարկ է որոնել եւ գտնել, թէ ե՛րբ, ո՛ր թուականին Հայաստանից դիտողի համար Կոյսի գլխաւոր աստղի արեգակնային ամբարձումը կը լինէր ամառնամուտից 8 օր առաջ:

Այսինքն, մեր օրացոյցի սկիզբը գտնելու խնդիրը հանգում է հետեւեալ խնդրին. գտնել, պարզել, թէ ո՛ր ժամանակ կարող էր Կոյսի գլխաւոր աստղի արեգակնային ամբարձումը Հայաստանից դիտուել ամառնամուտից 8 օր առաջ: Անշուշտ, սա մեզ չի կարող տալ ճշգրիտ թուական այնպէս, ինչպէս մենք ունեցել ենք Հայկեան օրացոյցի սկիզբը գտնելու խնդրում: Պատճառն այն է, որ այս դէպքում մենք չենք կարող կիրառել օրացուցային ետհաշուարկը, իսկ աստղի արեգակնային ամբարձման օրուայ եւ կանխաւ տրուած տօնական օրուայ զուգադիպումն էլ փոփոխւում է շատ դանդաղ⁷⁶: Եւ, ըստ այսմ, մեր գտնելիք տարեթուի ճշտութիւնը հաւասար կը լինի այն ժամանակամիջոցին, որի ընթացքում մէկ օրով կը փոփոխուի աստղի արեգակնային ամբարձման օրուայ դիրքը արեւադարձային տարուայ մէջ:

Հաշուարկների համար հիմք ընդունուած նախնական տուեալներից մէկը ընտրուած աստղի արեգակնային ամբարձման դիտման վայրի աշխարհագրական լայնութիւնն է:

Ժամանակին Հայկի աստղի արեգակնային ամբարձման օրը գտնելիս մենք, որպէս դիտման վայրի աշխարհագրական լայնութիւն, վերցրել էինք Հայաստանի միջին աշխարհագրական լայնութիւնը՝ $39^{\circ}5$: Եւ սա տուել էր բաւական ճիշտ արդիւնք: Ներկայումս կարող ենք այս նոյն արժէքը մի փոքր աւելի հիմնաւորել:

Ըստ նորագոյն տուեալների հնագոյն Արատտա երկրի տեղը համապատասխանում է Մաղկէոյ (Մաղկանց) լեռներին, Կոգ (Կոգովիտ) կոչուած գաւառին, Ոսկի, կամ Դրախտ լեռներին⁷⁷: Հէնց այս նոյն տարածքում են գտնուել Հայոց հին պաշտամունքի հիմնական կենտրոն Բագաւանը, Շահապիւան աւանը, ուր Հայոց նաւասարդեան տօնն է տօնուել, եւ գումարուել են աշխարհաժողովները, եղել

76 Օրացուցային ետհաշուարկ կիրառելիս մենք ունեինք աստղի ծագման եւ օրացուցային ամսաթուի զուգադիպման փոփոխութիւն մօտաւորապէս չորս տարում մէկ օրով, որ եւ թոյլ էր տալիս գտնել օրացոյցի սկիզբը 4 տարուայ եշտուրեամբ, որ բաւական լաւ եշտուրիւն է այդքան մեծ վաղեմութեան իրադարձութիւնների համար:

77 ԱՐՄԵՆ ԴԱՒԹԵԱՆ, Արատտա երկրի տեղորոշման հարցի շուրջ, ի Բագմակէայ, 2009, Ա.-ԺԲ., 158-181:

է արքունի ամառային զօրակայանը: Այստեղ է կատարուել եւ Հայոց արքունիքի ու զօրքի եւ ընդհանրապէս՝ ժողովրդի մկրտութիւնը Գրիգոր Լուսաւորչի ձեռքով: Այստեղ է (շուրջ 444 թուականին) գումարուել նաեւ Հայ եկեղեցու երկրորդ կանոնադիր-օրէնսդիր ժողովը (այսինքն, շարունակուել է աշխարհաժողովի աւանդոյթը): Այսինքն, տեսնում ենք, որ այս վայրի բացառիկ կարեւորութիւնը շարունակուել է մեզ յայտնի ամենավաղ՝ շումերական ժամանակներից մինչեւ գոնէ Ե. դարի հիմքուը, շուրջ երեք ու կէս հազարամեեակ: Որեւէ պատճառ չունենք համարելու, որ շումերական ժամանակներից (ն.թ. 28րդ դար) առաջ Հայոց երկրի կրօնական կենտրոնը այլ վայրում եղած լինի: Այս վայրի բացառիկ կարեւորութիւնը Հայոց երկրի եւ ժողովրդի համար կարելի է հիմնաւորել նաեւ այլ բազում տուեալ-ներով, սակայն այստեղ նշուածն իսկ բաւարար է ընդունելու համար, որ իրօք, հէնց այս տարածքն է եղել Հայոց երկրի կարեւորագոյն կրօնական-վարչական կենտրոնը, եւ ուրեմն, հէնց այստեղ էլ պէտք է կատարուէր գլխաւոր տօնի համար անհրաժեշտ՝ աստղի արեգակնային ամբարձման դիտումը⁷⁸: Ահա, դիտման վայրի աշխարհագրական լայնութեան համար մեր ընդունած $39^{\circ}5$ արժէքը լիովին համապատասխանում է Հայոց աշխարհի այս ամենասուրբ համարուած տարածքի դիրքին:

78 Հայոց երկրի համար այս վայրի բացառիկ կարեւորութիւնը հաստատող փաստերից այստեղ արժէ նշել գոնէ մի երկուսը: Այսպէս, ըստ մեզ հասած սեպագիր աղքիւրենիր Արարատեան բագաւորութեան (Ուրարտուի) մեզ յայտնի առաջին տիրակալ Արամէի (Արամուի) մայրաքաղաք Արծաշկուն, (որ ումանի նոյնացնում են միջնադարեան Արմէշի հետ), գտնուել է Վանայ (որ նոյն հիսխանական կողմում, որ հենց այս նոյն տարածքում է. ՅԱԿՈՒԵԱՆ, թ. Խ. - ՄԵԼԻՔ-ԲԱԽԻՇԵԱՆ, ՍՏ. Տ. - ԲԱՐՄԵՂԵԱՆ, թ. Խ., Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, Ա., Երեւանի Համալսարանի երտ., Երեւան 1986, 433: Բացի այդ, գիտենք, որ 450-451 բուականների յայտնի դեաքերի ժամանակ Պարսից զօրքն ու մոգերը Հայաստանի դաւանահիոնութիւնը փորձեցին սկսել հետք Անգղ բաղադրից, որ դարձեալ այս նոյն տարածքում է. տե՛ս ԴԱԿԻԹԵԱՆ, Ա., Արաստա երկրի տեղորոշման հարցի տարածքում է. այս նոյն շարքին պիտի դասել նաեւ շուրջ, ի Բազմապէտ, 2009, 158-181: Եւ այս նոյն շարքին պիտի դասել նաեւ շուրջ, ի Բազմապէտ, 2009, 158-181: Եւ այս նոյն շարքին պիտի դասել նաեւ տարածքում. տե՛ս ՅԱԿՈՒԵԱՆ, թ. Խ. - ՄԵԼԻՔ-ԲԱԽԻՇԵԱՆ, ՍՏ. Տ., տարածքում. տե՛ս ՅԱԿՈՒԵԱՆ, թ. Խ. - ՄԵԼԻՔ-ԲԱԽԻՇԵԱՆ, ՍՏ. Տ., Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, անդ, 476 (ցաւօք, այս բաղադրի երկար կեանք չունեցաւ. արտաքին բառարան, անդ, 476 (ցաւօք, այս բաղադրի ու բաղադրի անդամանական տեսքի միջամտութեամբ այն ուժերի սադրանով որոշ հայ նախարարական տեսքի միջամտութեամբ այն կործանուեց իր հիմնադրումից կարեն ժամանակ անց):

Շարադրանքս չծանրաբեռնելու համար այստեղ զանց կ'առնենք եռանկիւնաշափական ու հանրահաշուական գործողութիւնները եւ կը ներկայացնենք միայն դրանց վերջնական արդիւնքը։ Այդ հաշուարկը անհրաժեշտ մանրամասնութեամբ ներկայացուած է յօդուածիս Յաւելուածում։

Ստանում ենք, որ մեզ հետաքրքրող դարաշրջանում Հայաստանի տարածքից դիտողի համար Կոյսն համաստեղութեան գլխաւոր աստղի՝ Հասկի (Սպիկայի) արեգակնային ամբարձումը ամառնամուտից «Եղքրիտ» 8 օր առաջ է եղել ն.թ. 9000 թուականին։ Խսկ հաշուեառնելով հնարաւոր սիսալը, ստանում ենք, որ ըստ մեր հաշումների Նախահայկեան օրացոյցի սկիզբը պիտի եղած լինի ն.թ. 9080 – ն.թ. 8919 թթ. միջակայքում։ Ստանում ենք 161 տարուայ անորոշութիւն։ Այսինքն, մեր որոնած տարեթիւը մենք գտնում ենք 80 տարուայ սիսալով։ Անշուշտ, սա փոքր սիսալ չէ, սակայն ի նկատի առնելով իրադարձութեան բացառիկ մեծ վաղեմութիւնը, կարող ենք սա համարել լիովին բաւարար ճշտութիւն։⁷⁹

Ի հիմնարումն մեր ստացած թուականի հաւաստիութեան կարելի է նշել այս թուականի որակական համընկումը բովանդակութեամբ դրան աղերսուող որոշ այլ թուականների հետ։ Այսպէս։

ա.- Ժամանակին Մեծամօր հնավայրի Փոքր բլրի վերին հարթակի աստղագիտական ժայռագիր նշանագրի վերլուծութեամբ ստացուել էր, որ ամենայն հաւանականութեամբ այդ հարթակն ու նշանագիրը պիտի ծառայած լինեն Բոյլքի (Pleiades) արեգակնային ամբարձումը դիտելու համար ն.թ. 9000 շրջանում⁸⁰։ Եւ այդ ժամանակ էլ Բոյլքի դիտումով հնարաւոր պիտի եղած լինէր որոշել ձմեռային արեւադարձի օրը։ Այսինքն, ստանում ենք, որ ն.թ. 9000 թուականի շրջանում Հայաստանում եղել է աստղագիտական-օրա-

79 Անշուշտ, չի բացառում, որ ապագայում, նոր յաւելեալ տեղեկութիւնների ի յայտ գալով հնարաւոր դառնայ այս թուականի նշգրտումը եւ սխալի փոքրացումը։

80 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Հայկական հնագոյն օրացոյցների կապը երկնային լուսատութերի հետ, Աստղագիտութեան կապը այլ գիտութիւթերի, մշակոյրի եւ հասարակութեան հետ, ի Հայկական աստղագիտական ընկերութեան XIII տարեկան համաժողով, 7-10 Հոկտեմբերի, 2014, Բիւրականի աստղադիտարեկան խմբագիրներ՝ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Հ. Ա. - ՄԻՔԱՅԵԼԵԱՆ, Ս. Մ. - տարան, Խմբագիրներ՝ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Ս. Վ., ՀՀ ԳԱԱ. «Գիտութիւն» հրտ., Երևան 2015, 322-333։ ՖԱՐՄԱՆԵԱՆ, Ս. Վ., ՀՀ ԳԱԱ. «Գիտութիւն» հրտ., Երևան 2015, 322-333։ Խաեւ՝ ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Հայկական հնագոյն օրացոյցների կապը երկնային լուսատութերի հետ, ի Բազմավայլեալ, 2017, (ընդունուած է տպագրութեան)։

ցուցային բուռն գործունէութիւն, որի երկու տարրեր արտայայտութիւնները մեզ են հասել ի դէմս Նախահայկեան օրացոյցի սկզբնաւորման եւ Մեծամօրի աստղագիտական հարթակներից Բոյլքի դիտումներով ձմեռային արեւադարձի օրը որոշելուն:

Ա.՝ Մեր ստացած ժամանակը նաեւ բաւական լաւ ներդաշնակում է ներկայիս Արարատեան դաշտավայրի տեղում հնում եղած մեծ ջրային աւագանի (այսպէս կոչուած՝ Արարատեան ծովի) արագընթաց ցամաքելու ժամանակին: Ցայտնի է, որ չորրորդային դարաշրջանի միջին մասում՝ նոր պլեյստոկենում (neopleistocene) (780 – 12 հզր. տարի առաջ) ներկայիս Արարատեան դաշտավայրի տեղում եղել է ընդարձակ լիճ, որ այժմ յայտնի է «Արարատեան ծով» պայմանական անունով⁸¹: Նշուած դարաշրջանի վերջում երկրաբանական տարրեր գործընթացների հետեւանքով երկրաբանական առումով կարճ ժամանակի ընթացքում ցամաքում են Հայաստանի տարածքի մի քանի խոշոր ջրային գոյացութիւններ, որոնց թւում եւ Արարատեան ծովը⁸²: Ահա այս ժամանակ է, որ նախկին Արարատեան ծովի տեղում նախ ի յայտ են գալիս մի քանի կղզիներ (Արմաւիրի, Մեծամօրի, Արտաշատի բլուր-կղզիները), ապա եւ ի սպառ ազատում է Արարատեան դաշտավայրը ու սկսում է ջրից ազատուած հողերի ընակեցումն ու մշակումը: Բնական է, որ նոր բարեբեր ու դիւրամշակ տարածքների ի յայտ գալը, եւ դրանց շահագործման սկսուելը պիտի խթան լինէին թէ՛ երկրագործութեան, եւ թէ՛ գիտութեան ու մշակոյթի բուռն զարգացման համար: Այսինքն, մեր ստացած թուականը լաւ ներդաշնակում է նաեւ Հայաստանի երկրաբանական անցեալի մասին մեր արգի պատկերացումներին:

Գ.՝ Արդի կենսաբանական գիտութիւնը հաւասարում է, որ ցորենի մշակովի տեսակների ստացումը պիտի տեղի ունեցած լինի մեղնից մօտ 10-12 հզր. տարի առաջ⁸³:

81 САЯДЯН, Ю. В., *Новейшая геологическая история Армении*, изд. “Гитутюн” НАН РА, Ереван 2009, 203-216:

82 Արարատեան ծովի վերջնական ցամաքումը պիտի եղած լինի Ա.Ք. 8000 թուականից ոչ ուշ, քանի որ Արարատեան դաշտի տարածքում հենց այդ ժամանակից ի յայտ են գալիս մարդկային բնակութեան հնագիտական վկայութիւնները: Այս մասին տե՛ս ԲՐՈՒՏԵՍ.Ն, Գ., Հայկական հնագոյն օրացոյցների կազմ երկնային լուսատութերի հետ, ի Բագրավիկյան, 2017:

83 Տե՛ս, օրինակ, ГОНЧАРОВ, Н. П., *Доместикация растений. Вавиловский журнал генетики и селекции*, т. 17, 2013, № 4/2, 884-899.

Նախահայկեան օրացոյցի սկզբի որոնումը մեզ տալիս է երկու արդիւնք.

Առաջին՝ ստանում ենք, որ օրացոյցի երկարատեւ կիրառութեան ընթացքում անպայման պիտի փոխուած լինի այն աստղը, որի դիտումներով կարգաւորուել, շտկուել է օրացոյցը եւ որոշուել է գլխաւոր տօնի օրը։ Առկայ տուեալների քննութիւնը յանգեցնում է նրան, որ այս օրացոյցի սկզբնաւորման ժամանակներում իբրեւ դրա կարգաւորիչ, ուղենիշ աստղ պիտի կիրառուած լինի Կոյս կենդանակերպի գլխաւոր աստղը՝ Սպիկան։

Երկրորդ՝ ստանում ենք, որ այս՝ Նախահայկեան օրացոյցը պիտի սկզբնաւորուած լինի ն.թ. 9000 թուականին (80 տարուայ սիալով)։ Այսինքն՝ Նախահայկեան օրացոյցի սկիզբը պիտի եղած լինի ն.թ. 9080 – ն.թ. 8919 թուականների միջակայքում։

Նախահայկեան օրացոյցի սկզբնաւորման ժամանակը որակապէս համընկնում է Մեծամօր Հնավայրի Փոքր բլրի վերին հարթակի աստղագիտական ժայռագիր նշանագրի միջոցով որոշուած Հնարաւոր դիտումների ժամանակին, որի համար բոլորովին այլ եղանակով ստացուել էր ն.թ. 9000 թուականը։

ՅԱԻԵԼՈՒԱԾ

**ԿՈՅՄԻ ԳԼԽԱՀՈՐ ԱՍՏՂԻ ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ԱՄԲԱՐՁՄԱՆ
ՄԻԶՈՑՈՎ ՕՐԱՑՈՅՑԻ ՍԿԻՖԲԸ ԳՏՆԵԼԸ**

Մեր խնդիրն է գտնել, թէ ե՞րբ, ո՞ր թուականներին Հայաստանից դիտողը կը տեսնի Կոյսի գլխաւոր աստղի արեգակնային ամբարձումը ամառնամուտից 8 օր առաջ:

Ինչպէս ժամանակին արուել էր, այժմ եւս կ'օգտուենք ոլորտային եռանկիւնաչափութեան յայտնի բանաձեւերից⁸⁴ եւ պատմական տարբեր ժամանակներում պայծառ աստղերի հասարակածային կոօրդինատները տուող աստղացուցակներից⁸⁵:

Աստղի արեգակնային ամբարձումը տեղի է ունենում, երբ աստղը ծագում է արեւելեան հորիզոնին արեւածագից որոշ ժամանակ առաջ: Իբրեւ առաջին այդպիսի դիտման պայման ընդունուում է, որ աստղի ծագման պահին Արեւը պէտք է հորիզոնից վար լինի 15° :

Աստղի արեգակնային ամբարձումը կարելի է դիտարկել իբրեւ հետեւեալ երեք պայմանների միաժամանակեայ իրականացում:

ա. Աստղը պիտի լինի հորիզոնի վրայ,

բ. Արեւը պիտի լինի հորիզոնից 15° վար, եւ

գ. Իբրեւ երրորդ պայման էլ կը վերցնենք Արեւը խաւարածրի վրայ լինելը:

Աստղադիտական (պարալաքսային) եռանկեան համար գրելով եւ լուծելով ոլորտային եռանկիւնաչափութեան յայտնի բանաձեւերը, մեր պայմանների համար կը ստանանք.

84 БАКУЛИН, П. И. - КАНОНОВИЧ, Э. В. - МОРОЗ, В. И., *Курс общей астрономии*, "Наука", Москва 1977, 50 - 64.

85 HAWKINS, G. S. - ROSENTHAL, S. K., *5 000 - and 10 000-year star catalogs, Smithsonian Contributions to Astrophysics*, 1967, v. 10, № 2, 174.

$$\operatorname{tg} \delta = \operatorname{tg} \varepsilon \sin \alpha; \quad (1)$$

$$\cos t = \operatorname{tg} \varphi \operatorname{tg} \delta; \quad (2)$$

$$\cos t = \frac{\cos z}{\cos \varphi \cos \delta} - \operatorname{tg} \varphi \operatorname{tg} \delta; \quad (3)$$

Այստեղ (1)ը Արեգակը խաւարածրի վրայ լինելու պայմանն է, (2)ը՝ աստղը հորիզոնի վրայ լինելու պայմանն է, եւ (3)ն էլ լուսատուն շ զենիթային հեռաւորութեան շրջանի վրայ գտնուելու պայմանն է Փ աշխարհագրական լայնութեան համար:

Մեզ պէտք է գալու նաեւ

$$t = S - \alpha; \text{ առնչութիւնը, } \zeta = t + \alpha; \quad (4)$$

Բերուած առնչութիւններում կիրառուած են հետեւեալ նշանակումները:

$$\left. \begin{array}{l} \alpha - \text{ուղղակի } \delta \text{ագումը}, \\ \delta - \zeta \text{ակումը}, \\ t - \delta \text{ամային } \text{անկիւնը}, \end{array} \right\} \quad \begin{array}{l} \text{Սրանք } \text{լուսատուի } \zeta \text{ասարակա-} \\ \delta \text{ային } \text{կորդինատներն } \text{են}: \end{array}$$

ε – խաւարածրի եւ հասարակածի կազմած անկիւնը ($23^{\circ} 27'$),

φ – դիտման վայրի աշխարհագրական լայնութիւնը,

z – լուսատուի զենիթային հեռաւորութիւնը,

S – աստղային ժամանակը:

Այս առնչութիւնների միջոցով մեզ հետաքրքրող արդիւնքն ստանալու համար հարկ է նախ սեւեռել շ-ի եւ Փ-ի արժէքները: Քանի որ մենք ընդունել ենք, որ աստղի ծագման պահին Արեգակը պէտք է լինի հորիզոնից 15° վար, ապա Արեգակի համար կը լինի

$$z = 90^{\circ} + 15^{\circ} = 105^{\circ};$$

Փ-ն էլ դիտման վայրի աշխարհագրական լայնութիւնն է, որի համար մենք ընդունում ենք հիւսիսային լայնութեան $39^{\circ} 5'$ արժէքը (այս հիմնաւորումը տե՛ս յօդուածիս բուն շարադրանքում):

Աստղի դիրքը (նրա հասարակածային կորդինատները) վերցնում ենք Հօկինսի եւ Ռոգենթալի աստղացուցակից: Այստեղ ըերենք Սպիկա աստղի հասարակածային կորդինատները մեզ հետաքրքրող դարերի համար:

| Տարին | α_* ուղղակի ծագումը | δ_* հակումը |
|---------|----------------------------------|-----------------------|
| - 3000 | 136.84 | 15.07 |
| - 3500 | 130.03 | 17.03 |
| - 4000 | 123.07 | 18.72 |
| - 4500 | 115.98 | 20.12 |
| - 5000 | 108.77 | 21.21 |
| - 5500 | 101.46 | 21.94 |
| - 6000 | 94.07 | 22.32 |
| - 6500 | 86.63 | 22.31 |
| - 7000 | 79.18 | 21.92 |
| - 7500 | 71.76 | 21.15 |
| - 8000 | 64.38 | 20.01 |
| - 8500 | 57.07 | 18.50 |
| - 9000 | 49.84 | 16.66 |
| - 9500 | 42.68 | 14.49 |
| - 10000 | 35.58 | 12.04 |

Այս աղիւսակում ճախ սիւնակում տրուած են տարեթուերը ժամանակագութեան աստղագիտական համակարգով (-N թ. = ն.թ. (N+1) թ.): Յաջորդ սիւնակներում տրուած են Սպիկա աստղի առողջակի ծագումն ու ծ. հակումը անկիւնային միաւորներով: Ն.թ. 3001 թուականից նոր ժամանակների համար բաց են թողնուած տուեալները, ի նկատի առնելով, որ ն.թ. 2341 ից արդէն կիրառուել է Հայկեան օրացոյցը:

Արդ, մեր աղիւսակում առկայ տարիների համար հաշուենք աստղի ժագաման պահի Տ. աստղային ժամանակը: Դրա համար (2) հաւասարան մէջ տեղադրում ենք $\varphi = 39^{\circ} 5$ էւ ծ.-ի արժէքները աղիւսակից:

Կը ստանանք $t_* = \arccos(\pm \operatorname{tg} \varphi \operatorname{tg} \delta_*);$ **Եւ** $t_* - h$ **այս** **արժէքներին** **էլ** **կը համապատասխանեն** $S_* - h$ **չորս** **արժէքներ:** **Դրանցից** **մէկը** **աստղի** **ծագման,** **միւսը** **աստղի** **մայրա-մուտի** **աստղային** **ժամանակներն** **են,** **ծագման,** **միւսը** **աստղի** **մայրա-մուտի** **աստղային** **ժամանակներն** **են:** (**Բոլոր** **այն** **դէպքերում,** **երբ** **իսկ** **երկուսը** **աւելորդ** **լուծում-ներ** **են:** (**Բոլոր** **այն** **դէպքերում,** **Ս. -ն** **ստացւում** **է** **բացասական,** **դրան** **գումարուում** **է** **իր** **պարբերու-** **թիւնը՝** $360^\circ,$ **քանի** **որ** **դա** **ունի** **ժամանակի** **իմաստ** **եւ** **բացասական** **թիւնել** **չի** **կարող):**

| Sարին | t_* | t_* | S_* | S_* |
|--------|--------------------|---------------------|-------------------------------|-------------------------------|
| - 3000 | ± 77.175817855 | ± 102.824182145 | 214.015817855 59.664182145 | 239.664182145 34.015817855 |
| - 3500 | ± 75.374680875 | ± 104.625319125 | 205.404680875 54.655319125 | 234.655319125 25.404680875 |
| - 4000 | ± 73.778989727 | ± 106.221010273 | 196.848989727 49.291010273 | 229.291010273 16.848989727 |
| - 4500 | ± 72.422797340 | ± 107.577202660 | 188.402797340 43.557202660 | 223.557202660 8.402797340 |
| - 5000 | ± 71.342847884 | ± 108.657152116 | 180.112847884 37.427152116 | 217.427152116 0.112847884 |

| | | | | |
|---------|--------------------|---------------------|--------------------------------|--------------------------------|
| - 5500 | ± 70.606763491 | ± 109.393236509 | 172.066763491 30.853236509 | 210.853236509 352.066763491 |
| - 6000 | ± 70.219286547 | ± 109.780713452 | 164.289286547 23.850713453 | 203.850713452 344.289286548 |
| - 6500 | ± 70.229522217 | ± 109.770477783 | 156.859522217 16.400477783 | 196.400477783 336.859522217 |
| - 7000 | ± 70.627073747 | ± 109.372926253 | 149.807073747 8.552926253 | 188.552926253 329.807073747 |
| - 7500 | ± 71.402878356 | ± 108.597121644 | 143.162878356 0.357121644 | 180.357121644 323.162878356 |
| - 8000 | ± 72.530573155 | ± 107.469426845 | 136.910573155 351.849426845 | 171.849426845 316.910573155 |
| - 8500 | ± 73.989167102 | ± 106.010832898 | 131.059167102 343.080832898 | 163.080832898 311.059167102 |
| - 9000 | ± 75.718530394 | ± 104.281469606 | 125.558530394 334.121469606 | 154.121469606 305.558530394 |
| - 9500 | ± 77.699764911 | ± 102.300235089 | 120.379764911 324.980235089 | 144.980235089 300.379764911 |
| - 10000 | ± 79.873637270 | ± 100.126362730 | 115.453637270 315.706362730 | 135.706362730 295.453637270 |

Այս ստացուած $S_{*-}N_{\text{Երով}}$ գտնում ենք $\Psi_{\text{Երեխ}}$ դիրքը աստղի ծագման պահին: Դրա համար գտնում ենք խաւարածրի եւ $Z_* = 105^\circ$ շրջանի հատման կէտը աստղի ծագման պահի S_* աստղային ժամանակով: Այդ նպատակով հարկ է լուծել (1) եւ (3) հաւասարման ների համակարգը, տեղադրելով $\alpha_j = z_0 = 105^\circ$, $\varphi = \varphi_0 = ըրումների$ համակարգը, տեղադրելով $\omega_j = \omega_0 = 39.5^\circ$ եւ $S = S_*$: Այսինքն, պէտք է սեւեռուած S_* աստղային ժամանակի համար գտնել (3) եւ (1) հաւասարումների համակարգի լուծումը. ընդ որում, (3)-ի m_3^x տեղադրելով (4) առնչութիւնը $t = S_* - \alpha$; տեսքով, որտեղ $S_* - \alpha$ աստղի ծագման պահի աստղային ժամանակն է, իսկ $t - \alpha$ եւ $\alpha - \alpha$ $\Psi_{\text{Երեխ}}$ ժամանակին անկիւնն ու ուղղակի ծագումն են: Ուրեմն, տեղադրենք (3)-ի m_3^x (4)-ը եւ լուծենք (1)-ի հետ՝ $\alpha - \alpha$ եւ $\delta - \alpha$ դիտելով իբրեւ փոփոխականներ:

$$\begin{cases} \cos(S_* - \alpha) = \frac{\cos z_0}{\cos \varphi_0 \cos \delta} - \operatorname{tg} \varphi_0 \operatorname{tg} \delta . \\ \operatorname{tg} \delta = \operatorname{tg} \varepsilon \sin \alpha : \\ \cos(S_* - \alpha) = \frac{\cos z_0}{\cos \varphi_0} \sqrt{1 + \operatorname{tg}^2 \delta} - \operatorname{tg} \varphi_0 \operatorname{tg} \delta . \\ \operatorname{tg} \delta = \operatorname{tg} \varepsilon \sin \alpha : \end{cases} \quad (5)$$

Կատարելով որոշ պարզ ձեւափոխություններ, հաւասարում-ների (5) համակարգից կ'արտաքսենք ծ-ն եւ կը ստանանք.

$$\left(\cos^2 S_* - \frac{\cos^2 z_0}{\cos^2 \varphi_0}\right) \operatorname{ctg}^2 \alpha + 2 \cos S_* (\sin S_* + \operatorname{tg} \varphi_0 \operatorname{tg} \varepsilon) \operatorname{ctg} \alpha + \\ (\sin S_* + \operatorname{tg} \varphi_0 \operatorname{tg} \varepsilon)^2 - (1 + \operatorname{tg}^2 \varepsilon) \frac{\cos^2 z_0}{\cos^2 \varphi_0} = 0; \quad (6)$$


Սա՝ (6)-ը քառակուսի հաւասարում է ցգա-ի նկատմամբ (ա-ից բացի միւս բոլոր մեծութիւնները սեւեռեալ հաստատուն թուեր են): Հաշուելով գործակիցների արժէքները եւ լուծելով հաւասարումը, կը ստանանք ցգա-ն, որով եւ՝ ա-ն: Այս հաւասարումը կը տայ ա-ի (ցգ ա-ի) երկու արժէք, որոնցից միայն մէկն է բաւարարում մեր խնդրի պայմաններին: Հէնց դա էլ կը լինի աստղի ծագման պահին Արեւի ուղղակի ծագումը⁸⁶: Իսկ իմանալով Արեւի ուղղակի ծագումը, կ'որոշենք նաեւ դրա դիրքը արեւադի կամ գիշերահաւասարի կէտի նկատմամբ: Անշուշտ, Արեւի ընթացքը տարուայ մէջ հաւասարաչափ չէ: Մակայն հաշուարկի պարզութեան համար կարող ենք համարել այն հաւասարաչափ մեջ հետաքրքրող աստղի արեգակնային ամբարձման կը գտնենք մեզ հետաքրքրող աստղի արեգակնային ամբարձման օրը: Մե՛ր խնդրի համար կը պահանջենք, որ այդ օրը լինի առօր: Մե՛ր խնդրի համար կը գտնենք միայն արեւադարձից 8 օր առաջ, եւ ապա կը փնտուենք այն մառային արեւադարձից 8 օր առաջ, եւ ապա կը կարող էլ դա տեղի ունենալ: Մեր խնդրի համար տարին, երբ կարող էլ դա տեղի ունենալ S* աստղային ժամակը գերցնենք միայն աստղի ծագման պահի աստղային ժամակները եւ դրանցով որոշուած՝ Արեւի ա ուղղակի ծագումները: Աղիւսակով ներկայացնենք Արեւի ա կոորդինատները եւ դրանց համապատասխանող՝ մինչ ամառային արեւադարձ եղած օրերի քանակները տարբեր թուականների համար:

| Տարին (T) | Աստղի ծագման պահին Արեւի և ուղղակի ծագումը | Գարնանային գիշերահաւասարից անցած օրերի թիվը (N) |
|--------------|---|--|
| - 3000 | 153.925400232 | 159.06 |
| - 3500 | 147.753733806 | 152.68 |
| - 4000 | 141.573651326 | 146.29 |
| - 4500 | 135.396372455 | 139.91 |

86 Այս հաւասարման լուծումը համակարգչային ծրագրով իրականացնելուն հիմք օգնեց որդիս՝ Աւետ Բրուտեանը, որի համար նրան շնորհակալ եմ:

| | | |
|---------|---------------|--------|
| - 5000 | 129.225833469 | 133.53 |
| - 5500 | 123.096006939 | 127.20 |
| - 6000 | 116.994267274 | 120.89 |
| - 6500 | 110.952841770 | 114.65 |
| - 7000 | 104.970534972 | 108.47 |
| - 7500 | 99.054262522 | 102.36 |
| - 8000 | 93.176528224 | 96.28 |
| - 8500 | 87.340953073 | 90.25 |
| - 9000 | 81.500387800 | 84.21 |
| - 9500 | 75.633008917 | 78.15 |
| - 10000 | 69.673918610 | 72.00 |

Այս աղիւսակի տուեալները «աչքով» աւելի ընկալելի լինելու համար տանք նոյնը նաեւ գծապատկերի տեսքով (նկար 6):



Նկար 6.

Հայաստանից դիտուած՝ գարնանային գիշերահաւասարից մինչև Սպիկա աստղի արեգակնային ամբարձման օրուայ եղած օրերի թիւը տարբեր տարիներին. խաչով նշուած է գարնանամուտից 84 օր յևսոյի կետը, որ համապատասխանում է Ա.Ք. 9000 թուականին:

Այստեղ հորիզոնական առանցքի վրայ տեղադրուած են տարիները (T), իսկ ուղղաձիգ առանցքի վրայ ներկայացուած են գարնանային գիշերահաւասարից մինչեւ աստղի ծագման պահը եղած օրերի (N) թուի արժէքները: Վերը գծապատկերի վրայ կէտերով ներկայացուած են աղիւսակային արժէքները: Այս կէտերի դասառութիւնից երեւում է, որ N եւ T մեծութիւնների միջեւ առնչութիւնը գծանին է: Ուստի եւ դրանց կապը փնտուում ենք գծային հաւասարման յին է: Ուստի եւ դրանց կապը փնտուում ենք գծային հաւասարման տեսքով (N = a × T + b): Այս հաւասարման ա գործակիցն ու � ազատ անդամը գտնում ենք նոյն աղիւսակային տուեալներից՝ փոքրագոյն

քառակուսիների եղանակով։ Գծագրի վրայ փոքրագոյն քառակուսիների եղանակով ստացուած առնչութիւնը ներկայացուած է ընդհատ գծով։ Եւ այդ առնչութեան համար մեր ստացած բանաձեւային տեսքն է.

$$N = -0.012425 \times T + 195.8240$$

Այստեղ Տ-ով նշանակուած է ն.թ. թուականը, իսկ Ն-ով նշանակուած է գարնանային գիշերահաւասարից մինչեւ Սպիկա աստղի արեգակնային ամբարձման օրն եղած օրերի թիւը: Այս հաւասարման մէջ Տ-ի գործակիցն ու ազատ անդամը ստացուած են փոքրագոյն քառակուսիների եղանակով եւ վերի աղիւսակի թուերի ու ստացուած բանաձեւի միջեւ յարաբերակցութեան գործակիցը հաւասար է 0.9999336:

Ահա հինգ սրա միջոցով էլ գտնում ենք, թէ ո՞ր թուականներին է տեղի ունեցել մեզ հետաքրքրող իրադարձութիւնը:

Ամառային արեւադարձից 8 օր առաջ լինելը նոյնն է, ինչ գար-
նանային գիշերահաւասարից 84 օր յետոյ լինելը (գարնան տեւողու-
թիւնը 93 օր է): Գծապատկերից երեւում է, որ աստղի արեգակնային
ամբարձման օրը ամառային արեւադարձից 8 օր առաջ (գարնանա-
մուտից 84 օր յետոյ) է եղել մօտաւորապէս ն.թ. 9000 թուականին:
Նոյնն է ստացւում նաեւ այս նոյն կախուածութեան բանաձեւային
ներկայացումից (այս ժամանակի ճշգրիտ արժեքի համար մեր ստա-
ցած բանաձեւը տալիս է հէնց ն.թ. 9000 թուականը): Ընդունելով, որ
հնում աստղի արեգակնային ամբարձման օր արեւադարձից 8 օր ա-
ռաջ լինելը կարող էին որոշել առաւելագոյնը 1 օրուայ սխալով, մեր
բանաձեւի մէջ N-ը կը փոփոխենք 1-ով եւ կը վերցնենք այդ փոփո-
խութեանը համապատասխանող T տարեթուի արժեքները: Այս կերպ
կը ստանանք ժամանակային այն միջակայքը, որի ընթացքում պիտի
սկզբնաւորուած լինի Նախահայկեան օրացոյցը: Տեղադրելով մեր
սկզբնաւորուած լինի Նախահայկեան օրացոյցը: Տեղադրելով մեր
բանաձեւի մէջ N = 83 եւ N = 85, կը ստանանք ն.թ. 9080 եւ ն.թ. 8919
բանաձեւի մէջ N = 83 եւ N = 85, կը ստանում ենք, որ ըստ մեր այս հաշւումնե-
թուականները: Այսինքն, ստանում ենք, որ ըստ մեր այս հաշւումնե-
թուականները: Այսինքն, ստանում ենք, որ ըստ մեր այս հաշւումնե-
թուականների միջակայքը սկիզբը պիտի եղած լինի ն.թ. 9080 -
ն.թ. 8919 թուականների միջակայքում: Ստանում ենք 161 տարուայ
անորոշութիւն: Այսինքն, մեր որոնած տարեթիւը մենք գտնում ենք
161 տարուայ անորոշութեամբ: Նշանակում է՝ մեր գտած ն.թ. 9000
կայն ի նկատի առնելով իրադարձութեան շատ մեծ վաղեմութիւնը,
կայն ի նկատի առնելով իրադարձութեան շատ մեծ վաղեմութիւնը:

Summary

THE BEGINNING OF PROTOHAYKIAN CALENDAR

GRIGOR BROUTIAN

As we know the old Armenian Haykian calendar was a typical solar one and has 12×30 days + 5 days = 365 days structure. The year in this calendar consists of 12 months 30 days each and thus contains only 360 days. After these 360 days of year 5 additional days were added to complete the year cycle. The beginning of this calendar was calculated to be in 2341 BC. The main holiday of this calendar - Nawasard has been fixed and the day of this feast was determined by observing the heliacal rising of the star α Orionis – Betelgeuse which takes place 8 days before summer solstice. The calendar that was in use in Armenia before the Haykian one was completely based on star observations. The year in this calendar has 10×30 days + 70(65) days = 365.2422 days structure. Only the period of time when the main star of the heavenly image of the Supreme Being was visible in the sky was considered as year, while the time when this star was not visible was considered to be out of year and this was a period of different taboo. The year in this calendar consists of 10 months 30 days each and thus contains only 300 days. After these 300 days of year a 70(65) days out of year period was added. Although the existence and the structure of Protohaykian calendar are proved by mediaeval Armenian historical sources, Armenian folklore sources, folklore of neighboring nations, calendars of some neighboring nations, and the analyze of ornaments on a ceramic vessel of XXXII c. BC from Keti (Shirak, Armenia) the beginning of this calendar is unknown yet.

Here an attempt is made to calculate and find out the date of the beginning of Protohaykian calendar. First it was shown that in the case when we have too long use of determination of fixed days by means of observations of heliacal risings of stars in any calendar there must be changed either the day fixed by the observations or else the star used for that determination. In the case of Protohaykian calendar the day of the main holiday could not be changed as it was correlated with the day of the harvest of winter crops. So the star used to check the day of the main feast must be changed. It is shown that at the period of the establishment of Protohaykian calendar the heliacal rising of the star Spica – α Virgo was used to determine the day of the main holiday. Our calculations show

that the heliacal rising of α Virgo was observable from Armenia 8 days before summer solstice in 9000 BC. Thus, we assume that the Protohaykian calendar was established in 9000 BC. This date is in good correlation with the time of observation of Pleiades from the observational platform of the Small Hill in Metsamor. We have also good correlation with geological data concerning the time of drying of so-called Araratian see existing in the region of modern Araratian valley from 780000 until 12000 BC and the time of cultivation of crops in Armenia about 12000 years ago.